

Շայերեն բաժին

- Հայաստան-փիլոզ...1,9-12
- Լրատական...2-8
- Ապրիլեան...13-14
- Շուշի...15
- Հասարակական-երեք սերունդ...16-17
- Մշակոյթ - Իրանահայ Գաղթօջախները...18
- Մշակոյթ - Անրի Վերնոյ...19-21
- Մշակոյթ.- Յուշեր...21-22
- Մանկական...23
- Առողջապահական...24

Պարսկերեն բաժին

- Ֆ. Լանկամերեր...1
- Ամփոփ լուրեր՝ Իրանահայ համայնք.2
- Իրան...2
- Հայաստան...3
- Միջազգային...5
- Չանազան...6
- Կասպից ծովի նավթամուղները...6-8
- Հայ-պարսկերեն-անգլերեն առաժանի.8



Ճապիկի առաջին էջում՝

Հայաստան-Սփիւռք 2-րդ խորհրդաժողով

Ճապիկի վերջին էջում՝

Ս. Կարապետ եկեղեցի, Աբադան – Իրան



Ճամբար 53-56 31 Յուլիսի, 2002 թ.

No. 53-56 31 July 2002

Գլխաւոր խմբագիր
Էդ. Բաղդասարեան

Խմբագրութեան Լրատու
**Կ. Սարգսեան, Լ. Ահարոնեան
Ա. Խեչումեան, Վ. Վարդանեան**

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն - Ս Փ Յ Ո Ւ Ռ Ք Ե Ր Կ Ր Ո Ր Դ Խ Ո Ր Հ Ր Դ Ա Ժ Ո Ղ Ո Վ Ի Հ Ռ Չ Ա Կ Ա Գ Ի Ր

Երևան, մայիս 27-28, 2002

Մենք՝ Հայ ժողովրդի բոլոր հատվածների ներկայացուցիչներս, այսօր Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանում միասնաբար քննարկեցինք արդի պատմական, աշխարհաքաղաքական նոր իրողություններում Հայության առջև ծառայած համազգային առաջնահերթություններն ու մարտահրավերները և նախանշեցինք դրանք համատեղ ջանքերով լուծելու ուղիներն ու միջոցները:

Երկրորդ խորհրդաժողովը, Հայաստան-Սփյուռք փոխհարաբերություններին նվիրված 1999 թվականի սեպտեմբերին կայացած Առաջին խորհրդաժողովում սկիզբ դրված գործընթացի շարունակությունն է, որի սկզբունքները որպես հանձնառություն ամրագրվեցին խորհրդաժողովի ընդունած Հռչակագրում:

Երկրորդ խորհրդաժողովը արձանագրում է, որ անցած ժամանակաշրջանում Հայաստան-Սփյուռք փոխհարաբերությունները և գործակցությունը ընթացել ու զարգացել են Հռչակագրի սկզբունքներին և ոգուն համահունչ:

Ներկայումս աշխարհում, մասնավորապես ԱՄՆ-ի սեպտեմբերի 11-ի ողբերգական իրադարձություններից հետո, տեղի են ունենում նոր տեղաշարժեր ու զարգացումներ, որոնք շոշափում են Հայաստանի, Արցախի և համայն Սփյուռքի կենսական շահերը, և Հայությունը չի կարող անտարբեր մնալ այս նոր մարտահրավերներին:

Մենք ունենք միասնական պատմություն, ընդհանուր նպատակներ ու խնդիրներ, ամբողջ հայությանը և նրա յուրաքանչյուր հատվածին առանձնահատուկ առաջնահերթություններ և միայն մեր հավաքական միասնությամբ, մարդկային և նյութական ներուժի համախմբմամբ ու կենտրոնացմամբ կարող ենք լուծել մեր առջև ծառայած խնդիրները:

Հայությունը իր ամբողջ պատմության ընթացքում ունեցել է թռիչքներ և անկումներ, տարել հաղթանակներ և կրել պարտություններ և, ի հեճուկս բոլոր արհավիրքների ու խոչընդոտների, իր ներդրումն է ունեցել համաշխարհային քաղաքակրթության զարգացման մեջ՝ պահպանելով իր մշակութային ու ազգային նկարագիրը:

Ճար. էջ 9

Տարեվերջի հանդես «Արարատ» դպրոցում

Սոյն քուսակների յունիսի 26-ին Թեհրանի Մաջլիսի բաղադրամասի «Արարատ» դպրոցում պետք է վկայական յանձնել տյն դպրոցի 3-րդ ուղեցոյցն աւարտած աշակերտուհիներին: Վկայականների յանձնմանը գուգահեռ ձեռնարկել էր մի գեղարւեստական ծրագիր, որի գլխատը հեղինակն ու կազմակերպիչն էր նոյն դպրոցի հայոց լեզու ուսուցչուհի Ռուբինա Խաչատրեանը:

Ծրագիրը սկսեց երկու թատերական ներկայացումներով: Նախ բեմադրեց «Գող, սիրտը դող» վոդեվիլը եւ ապա երկու մենապարերով հանդես եկան Նիկետ Ալլահաթաին եւ Ալիս Չաքարեանը: Այնուհետեւ բեմադրուեց երկրորդը՝ «Թատերական դասարանը» կատակերգութիւնը:

Առաջին ներկայացման դերակատարներն էին Իգետ Խուդաբախշեանը (ի դէպ նա յայտարարեց դպրոցի գերագանց աշակերտուհի), Թանիա Ճատրեանը, Քրիստին Փիրալին եւ Լարիսա Տէր Կարապետեանը: Իսկ երկրորդ թատերգութիւնը ներկայացնում էին Սէրի Խաչատրեանը, Արագ Առաքելեանը, Թինա Դաթեանը, Սարինէ Նազարեանը եւ Մեղմիկ Յարութիւնեանը: Թատերական ներկայացումների բեմադրիչն էր Վաչիկ Վարդանեանը:

Ծրագրի երկրորդ բաժնում ելոյթ ունեցաւ դպրոցի աշակերտուհիներից կազմած երգչախումբը, դեկավարութեամբ երիտասարդ խմբավար Կարէն Մեհրաբեանի: Երգչախմբին օժանդակում էր նոյնպէս երիտասարդ դաշնակահար Ալին Յովհաննիսեանը: Երգչախմբի ելոյթի ընթացքում մերթ ընդ մերթ ասմունքներով ելոյթ ունեցան դպրոցի աշակերտուհիները: Այս բաժնի վերջում ուսուցչուհիների կողմից ելոյթ ունեցաւ Ռ. Խաչատրեանը: Նա իր պատշաճ ելոյթում մասնատրապէս շնորհակալութիւն յայտնեց Ծնողական Խորհրդին իր ցուցաբերած անվերապահ օժանդակութեան համար:

Ծրագրի վերջում դպրոցի փոխտեսչուհի Ժենիկ Մինասեանի միջոցով աւարտական վկայականները յանձնեցին աշակերտուհիներին: Նախքան վկայականների յանձնումը ընթերցեց նաեւ աշակերտուհիների հրաժեշտի խօսքը:

Դարեր շարունակ հայը յարատել է արտերկրում, եւ այդ բոլորի համար պարտական ենք նախ եւ առաջ մեր մշակութային նիւթերին, որոնք այսօր էլ առանց որեւէ ակնկալիքի եւ գուտ սիրողական կարգով հայ մշակոյթի ջահակիր դարձած ծառայում են հայապահպանման գործին: Ահա այստեղ՝ «Արարատ» դպրոցում էլ գտնում ենք այդպիսիների հետքերը: Այսօր դրա վառ օրինակներից են հայոց լեզու ուսուցչուհի տիկ. Ռ. Խաչատրեանը եւ նրան օժանդակող անձինք:

Դարձեալ Ժիրայր Անանեանի անունը հոլուեց

Արդէն անիսներ է, որ Թեհրանի «Թաթրէ շահր» թատերական համալիրի բեմից իրաքանչիւր հինգ-շաբթի եւ ուրբաթ օրերը հանդիսատեսների ներկայութեամբ ռադիօբեմադրում է տարբեր թատերգութիւններ, եւ այդ նոյն թատերգութիւնները հետագայում եթերում են Իրանի ռադիոյի ալիքներից մէկի միջոցով:

Սոյն քուսակների յունիսի 13 եւ 14-ին ներկայացուց Լայաստանի ժամանակակից դրամատուրգ Տ. Անանեանի «Ես եմ, եկել եմ» թատերգութիւնը: Թատերգութիւնը թարգմանել էր իրանահայ հանրայայտ թարգմանիչ եւ բեմադրիչ Անդրանիկ Խեչումեանը: Ռադիօբեմադրիչն էր Իրանի հանրաձայնօր արեստագէտ՝ Սադրեդին Շաջարէն: Դերակատարներն էին ռադիոյի հմուտ դերասաններ՝ Ահմադ Ադալուն, Ահմադ Իրանիխահը, Էսմայիլ Բախտիարին, Փայամ Դեհբորդին, Ալի Ռազինին, Ալի Միլանին, Մահին Նասերին եւ Մոհամմադ Եգանէն:

Դահլիճը լեւի-լեցուն էր, հետեւաբար շատերս ոտքի վրայ հաղորդակից եղանք ներկայացմանը:

Ներկայացումից առաջ Ս. Շաջարէն անձամբ նախ ընթերցեց հեղինակի ուղերձը, որն ուղղւած էր պարսիկ ընթերցողին: Ապա նա վերլուծելով Անանեանի ստեղծագործութիւնները, նրա ոճը համեմատեց ռուս աշխարհահռչակ գրող՝ Չեխովի ոճի հետ:

Ներկայացումը ներկաների մեծ գոհունակութեանը արժանացաւ: Արդէն բազմիցս իրանական բեմերից հնչել է Լայաստանի արեստագէտի անունը, եւ այս բոլորը նախ եւ առաջ ի շնորհիւ Ա. Խեչումեանի: Անկասկած Ա. Խեչումեանը այդ բոլորը ի կատար է ածում առանց որեւէ ակնկալիքի, այն համարելով իր ազգային պարտականութիւնը:

Ա. Խեչումեանն իր բազմաթիւ թատերական բեմադրութիւններին գուզընթաց թարգմանութիւններ է կատարել (պարսկերէնից-հայերէնի եւ հակառակը) երկու բարեկամ ժողովուրդների մշակոյթը միմեանց ծանօթացնելու նպատակով:

2001 քուսակների սեպտեմբերին առաջին անգամ, Ա. Խեչումեանի թարգմանութեամբ Լայաստանում բեմադրեց «Ուսապարկով մարդը» թատերգութիւնը, որի բեմադրիչն էր նոյնպէս ինքը: «Ուսապարկով մարդը» բեմադրուեց Իրանի եւ Լայաստանի դերակատարների համագործակցութեամբ, եւ համեստս էլ մասնակցում էի այդ բեմադրութեանը:

Ա. Խեչումեանը ոչ միայն ճանաչւած է հայ համայնքում, այլ մեծ յարգանք է վայելում նաեւ Իրանի թատերական շրջանակներում: Թերեւս հէնց այդ պատճառով է, որ նրան են վստահում Լայաստանից Իրան ժամանած թատերախմբերի ընդունելութեան, առաջնորդութեան եւ նրանց գործերի կազմակերպման պատասխանատւութիւնը:

Ուժ ու կորով ենք մաղթում այն բոլոր անձանց, որոնք իրենց նպաստն են ներդնում նմանատիպ գործերի մէջ, եւ մաղթում ենք առաւել զարգանայ երկու ժողովուրդների մշակութային յարաբերութիւնները:

Լրագրութիւնը՝ ՇոգէՅ Ամիրեանի

ԾՅԹԷ՛՛ՅՅ

Կանադահայ գործարարները մտադիր են ներդրումային ծրագրեր իրականացնել Արցախում

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ, 30 ՄԱՅԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Աշխատանքային այցով Արցախում են գտնվում կանադահայ մի խումբ հայտնի գործարարներ, որոնք հանրապետություն են ժամանել երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակին ծանոթանալու, տեղի գործարարների հետ կապեր հաստատելու, առաջիկայում տնտեսության մեջ ներդրումային ծրագրեր իրականացնելու նպատակով: Ըստ ԼՂՀ Արտգործնախարարության Տեղեկատվական եւ վերլուծական վարչության հաղորդագրության, նրանք ծանոթացել են վերջին տարիներին ներդրումների հաշվին հանրապետությունում, մասնավորապես Ստեփանակերտում, ստեղծված ձեռնարկությունների գործունեությանը, տեխնիկական հնարավորություններին ու իրենց հետաքրքրող մյուս խնդիրներին:

Կանադահայ եւ արցախցի գործարարների համատեղ հանդիպմանը ԼՂՀ Արդյունաբերողների եւ գործարարների միության նախագահ, վարչապետի խորհրդական Սամվել Հակոբյանը եւ Տորոնտոյի հայ գործարարների միության նախագահ Վազգեն Թերզյանը կարեւորեցին սկզբնավորվող համագործակցության նշանակությունը ԼՂՀ տնտեսության զարգացման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գործում: Նրանք համոզմունք հայտնեցին, որ արդեն մոտ ապագայում կոնկրետ քայլեր կարվեն այդ ուղղությամբ: Հանդիպման արդյունքում ստորագրվեց փոխըմբռնման հուշագիր:

Համահայկական երրորդ խաղերը կկայանան հաջորդ տարի

Համահայկական երրորդ խաղերը տեղի կունենան 2003 թ. օգոստոսի 16-24-ին: Այս մասին լրագրողներին տեղեկացրեց Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեի նախագահ Աշոտ Մելիք-Շահնազարյանը՝ ամփոփելով կոմիտեի 3երդ՝ երեսույնյան նստաշրջանի արդյունքները: Նստաշրջանը որոշել է նաեւ կառուցվածքային փոփոխություններ ձեռնարկել կոմիտեում՝ խաղերի հեղինակությունը բարձրացնելու համար:

Մասնավորապես, այս տարվա վերջին կայանալիք՝ գործադիր կոմիտեի կազմի ընտրություններին Համաշխարհային կոմիտեն նախագահելու առաջարկ կարվի ՀՀ արտգործնախարարին: Ըստ պրն Մելիք-Շահնազարյանի, Վարդան Օսկանյանն արդեն տվել է իր համաձայնությունը:

Պրն Մելիք-Շահնազարյանը նշեց նաեւ, որ այս տարի պիտի լուծվի կոմիտեի՝ բյուջե ձեւավորելու խնդիրը: «Այլապես, մենք մինչեւ հիմա չգիտենք, թե որքան գումար է ծախսվել Համահայկական նախորդ երկու խաղերին: Որոշ գումարներ, հագուստ եւ այլն, տրամադրել են մասնակից քաղաքները: Մեծ ներդրումներ է ունեցել մեր կառավարությունը»:

Պրն Մելիք-Շահնազարյանը հատուկ շեշտեց նաեւ, որ կոմիտեն հանձն է առել ակտիվացնել նախկին ԽՍՀՄ երկրների հայ համայնքների մասնակցությունը խաղերին: «Այլապես նախորդ երկու խաղերին նրանց մասնակցությունը գրեթե աննշան էր՝ որոշ բացառություններով»:

Ղարաբաղյան հակամարտության կարգավորման ձանապարհին կողմերը պետք է հաշվի առնեն նաեւ տարածաշրջանի շահերը

Իրանի դեսպան Բոլեյնիի ասուլիսը

«Իրանն ունի լավ, բարեկամական հարաբերություններ հարեւանների, հատկապես Հայաստանի եւ Ադրբեջանի հետ: Իրանը միշտ ջանքեր է գործադրել հարեւանների միջեւ լարվածությունը թուլացնելու եւ չեզոքացնելու համար», երեկ հրավիրած մամուլի ասուլիսում հայտարարեց ՀՀ-ում ԻԻՀ դեսպան Մոհամադ Ֆարիադ Բոլեյնին:

Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցում, ղարաբաղաւադրեջանական պատերազմի տարիներին Իրանը դրական չեզոքության դիրքերից է հանդես եկել, ի տարբերություն մեր մյուս հարեւան Թուրքիայի, որը դրսեւորել է խիստ ընդգծված ադրբեջանամոլապատ դիրքորոշում, Բաքվին օժանդակել ռազմական, տնտեսական դորտներում, ինչը, սակայն, Ադրբեջանի համար ցանկալի արդյունք չտվեց: Դրական չեզոքության հետ մեկտեղ Թեհրանը բազմիցս հայտարարել է, որ ճանաչում է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, ինչը արեւելյան դիվանագիտության բաղկացուցիչներից է: Վերջերս, երբ Թեհրան էր ժամանել Հեյդար Ալիեւը, Իրանի արտգործնախարար Քամալ Խարազին կրկնեց, որ Իրանը ճանաչում է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը: «Այդ հայտարարությունը եղել է հակամարտող կողմերի միջեւ անհրաժեշտ ճկունություն ստեղծելու, փոխադարձ ընկալում առաջացնելու համար», ասաց դեսպան Բոլեյնին:

Խորհրդային տարիներին Հայաստանն Իրանի հետ ուներ 45 կմ-անոց սահման, ղարաբաղյան պատերազմի արդյունքում հայկիրանական սահմանն Արաքս գետի երկայնքով ընդարձակվեց եւս 130 կմ-ով: «Եթե հայկական կողմը վերադարձնի Չանգեւանի եւ Ֆիզուլիի շրջանները, ինչպիսի՞ն կլինի Թեհրանի արձագանքը, այս հարցին պրն Բոլեյնին տվեց հետեւյալ պատասխանը. «Իրանի դիրքորոշումը պարզ եւ հստակ է: Մենք կարծում ենք, որ ցանկացած որոշում, որը կնպաստի խաղաղության գործընթացին, կողմերի միջեւ համաձայնության ձեռքբերմանը, օգտակար կլինի տարածաշրջանի ժողովուրդների համար, ընդունելի է: Մենք կարծում ենք, որ կողմերը համաձայնություն ձեռք բերելու համար պետք է անցնեն փոխհամաձայնության միջանց-

քով՝ այդ ծիրում հաշվի առնելով իրենց ազգային շահերը: Հակամարտող կողմերը պետք է հաշվի առնեն նաև տարածաշրջանի շահերը»:

Թե որոնք են տարածաշրջանի շահերը, պրն Քոլեյնին չմանրամասնեց: Չմանրամասնեց նաև, թե Ջանգելանի եւ Ֆիզուլիի շրջանների հնարավոր վերադարձը Ադրբեջանին հակասում է տարածաշրջանի շահերին:

«Այն, ինչ հայտարարել է պրն Վարդան Օսկանյանը, ամբողջովին համապատասխանում է իրականությանը: Այն հայտարարությունները, որ արվում են որոշ երկրների կողմից, ավելի շատ հիշեցնում են սցենարներ՝ միտված Իրան-Հայաստան հարաբերությունները հոգեբանական առումով վերահսկելու նպատակին: Կարծում եմ, որոշ դիվանագետներ հայտարարություններ անելիս պետք է զգույշ լինեն, քանզի որեւէ կառուցողական դիրքորոշում դրանից չի ծնվի: Ոչ մի օտարերկրյա ուժ իրավունք չունի միջամտելու Իրան-Հայաստան հարաբերություններին», ասաց ՀՀ-ում ԻԻՀ-ի ղեկավարը՝ մեկնաբանելով «Լիզին» գործարանի եւ նախկին վարչապետի եղբոր անունները ԱՄՆ «սեւ ցուցակում» հայտնվելու փաստը:

Վարդան Օսկանյանը վերջերս հայտարարել էր. «Կոնկրետ «Լիզին» ղեպքը եղել է, արձանագրվել է, ԱՄՆ-ն արդեն պատժամիջոցներ է կիրառում: Ապրանքը վաճառվել է: Խոսքը երկակի օգտագործման ապրանքների մասին է: Միշտ էլ կարելի է վիճել դրա շուրջ: Կարող է առաջին հայացքից անմեղ թվացող մետաղն իր մեջ ածխի կամ այլ նյութի այնպիսի տոկոսային բովանդակություն ունենա, որն օգտագործվի միջուկային զենքերի կամ զանգվածային բնաջնջման քիմիական զենքերի ուսումնասիրության, ստեղծման մեջ: Վստահ եմ, այդ ընկերությունը նման միտում չի ունեցել, որ նպաստի այլ երկրների միջուկային զենքի ուսումնասիրությանը, ուղղակի անմեղորեն դա վաճառել է... Ե՛վ այս կոնկրետ ղեպքը, եւ առհասարակ ԱՄՆ որդեգրած քաղաքականությունն Իրանի նկատմամբ որեւէ ազդեցություն չեն ունենա Երեւան-Թեհրան հարաբերություններում»:

Մեկնաբանելով Պուտին-Բուշ հանդիպումը, ստորագրված ռուս-ամերիկյան համաձայնագրերը, ղեկավարը Քոլեյնին շեշտեց, որ Ռուսաստանը պաշտպանեց իր ազգային շահերը: Մոսկվայում Բուշը մտահոգություն էր հայտնել պաշտպանական բնագավառում ռուս-իրանական համագործակցության առթիվ, ինչին ի պատասխան Պուտինը նշել էր, որ ռուս-իրանական համագործակցությունը ռազմական բաղադրիչ չունի, իսկ «Բուշեիրում ատոմակայան կառուցելու նախագիծը ոչնչով չի տարբերվում ԿԺԳ-Հ-ում գիտական ռեակտորի կառուցման վերաբերյալ վերջերս ամերիկյան ընկերությունների ընդունած ծրագրից»:

Իրանի ղեկավարը կտրականապես հերքեց համաշխարհային մամուլում տարածվող լուրերը՝ իբր Թեհրանը եւ Վաշինգտոնը գաղտնի բանակցություններ են վարում:

ԹԱԹՈՒԼ ՆԱԿՈՒՅԱՆ

Նոր նշանակումներ ՀՀ-ում բրիտանական ղեկավարությանը

2003 թ. հունվարից Հայաստանում Մեծ Բրիտանիայի ղեկավարի պաշտոնում տիկին Թորոնա Աբոտ Ուաթը

կփոխարինի Թիմոթի Ջոնսին, որը ղեկտեմբերին կմեկնի Երեւանից եւ հույս ունի մինչ այդ՝ նոյեմբերին, բացել Բաղրամյան պողոտայում՝ ամերիկյան համալսարանի հարեանությամբ վեր խոյացող ղեկավարության նոր շենքը, հաղորդում է Հայաստանում բրիտանական ղեկավարության հունիսյան տեղեկագիրը: Միաժամանակ, հիշեցման կարգով տեղեկագիրն ավելացնում է, որ քաղաքական, լրատվական եւ հասարակական գործերի Յուրթ քարտուղար Սառա Մուրելը Երեւան կժամանի հուլիսի 3-ին, իսկ Քրիս Սքինը, որպես գործերի հավատարմատար, կժամանի հուլիսի 5-ին՝ փոխարինելու Ջերեմի Գրինվուդին:

Ղեկավարություն Շվեյցարիայում, ղեկավար է Չոհրաբ Մնացականյանը

Հիմք ընդունելով «Գլխավորապես ծառայության մասին» օրենքը, նախագահ Ռոբերտ Քոչարյանը հունիսի 29-ին հրամանագիր է ստորագրել Շվեյցարիայի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության ղեկավարություն ստեղծելու մասին /նստավայրը՝ Ժնև/։ Նույն օրը հանրապետության նախագահը հրամանագիր է ստորագրել Ժնևի ՄԱԿ-ի գրասենյակում եւ այլ միջազգային կազմակերպություններում ՀՀ մշտական ներկայացուցիչ Չոհրաբ Մնացականյանին, համատեղության կարգով, Շվեյցարիայի Հանրապետությունում ՀՀ արտակարգ եւ լիազոր ղեկավար նշանակելու մասին /նստավայրը՝ Ժնև/:

Գեորգյան ձեռարանը՝ բարձրագույն ուսումնական հաստատություն

ՀՀ կառավարության որոշմամբ Մայր աթոռ Սբ. Էջմիածնի Գեորգյան հոգեւոր ճեմարանը ճանաչվել է որպես բարձրագույն ուսումնական հաստատություն:

Հուլիսի 2-ին Մայր աթոռ Սբ. Էջմիածնում կառավարական սույն որոշումը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսին պաշտոնապես հանձնեց ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար Մանուկ Թովուդյանը:

Նույն օրը երեկոյան Ամենայն հայոց հայրապետի նախագահությամբ Մայր աթոռ Սբ. Էջմիածնում տեղի ունեցավ Գեորգյան հոգեւոր ճեմարանի 2001-2002 թթ. ուսումնական տարվա ամսվերջյան հանդիսությունը:

Այս տարի ճեմարանում հոգեւոր կրթություն էր ստանում հարյուր երեք ուսանող, որոնցից վերջին լսարանն ավարտեց քսաներկուսը:

Գարեգին Երկրորդ կաթողիկոսի հանդիպումները Բուլղարիայի նախագահի եւ խորհրդարանի նախագահի հետ

ՍՈՖԻԱ, 27 ՀՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՄ: Հայաստանի եւ Բուլղարիայի ու նրանց ժողովուրդների փոխհարաբերությունները խոր արձատներ ունեն եւ այժի եւն ընկնում «եղբայրությամբ եւ սիրով»: Չորեքշաբթի օրը այսպիսի հայտարարություն է արել պաշտոնական այցով այստեղ գտնվող Հայ առաքելական եկեղեցու առաջնորդ Գարեգին Երկրորդ կաթողիկոսը:

Նրան ընդունել են Բուլղարիայի նախագահ Գեորգի Պրվանովը եւ խորհրդարանի նախագահ Օգնյան Գեջիկովը: Հայոց հոգեւոր առաջնորդը գոհունակությամբ

է հայտնել այն հեռանկարի առթիվ, որ բացվում է Սոֆիայի եւ Երեւանի փոխհարաբերություններում: Պատրիարք Մաքսիմի հրավերով Բուլղարիա ձեռնարկած իր այցը նա գնահատել է որպէս Հայ առաքելական եւ Բուլղարական ուղղափառ եկեղեցիների «էկումենիկ հարաբերությունների ապացույց»:

Իր հերթին նախագահ Պիրվանովն ընդգծել է, որ վերջին ժամանակներս Բուլղարական ուղղափառ եկեղեցին ուժեղացնում է իր հեղինակությունն ու ազդեցությունը՝ արդյունավետ հարաբերություններ հաստատելու այլ դավանանքների ներկայացուցիչների հետ: Ըստ նրա, դրա օրինակներից մեկն է Հռոմի պապի՝ մայիսի վերջերին Բուլղարիա կատարած այցը:

Ստեփան Դեմիրճյանը նախագահական պայքարի է նետվում Միացյալ Նահանգներից

ԱՄՆ-ի հայկական քաղաքական շրջանակներում Հայաստանի ներքաղաքական իրավիճակի մասին պատկերացումներն աղոտ են: Երբ այդ շրջանակներում ստեղծված առիթի դեպքում խոսում են Հայաստանի ընդդիմության՝ առաջիկա նախագահական ընտրություններում իրական հնարավորությունների մասին, գրուցակիցներիդ առաջին հակազդեցությունը լինում է անսահման զարմանքը՝ ինչպէ՞ս թե, Ստեփան Դեմիրճյանը միայն հինգ տոկոս ընտրողների աջակցություն կստանա՞:

Հայաստանի նախագահ դառնալու անսահման հավակնություններ ունեցող Ստեփան Դեմիրճյանը եւ Հայաստանի նախկին վարչապետներից Արմեն Մարգարյանն իրենց հնարավորությունների մասին իրական պատկերացումներ չունեն, այլապես նրանք նախընտրական պայքարը կսկսեին հայաստանյան գյուղերում՝ շահարկելով բնակիչների ծանր սոցիալական պայմանները, «Հոկտեմբերի 27»-ը, չարաբաստիկ Մեդրին եւ հաճախակի այցելություններ չէին կատարի ԱՄՆ՝ ակնկալելով հայկական քաղաքական շրջանակների ֆինանսական աջակցությունն առաջիկա նախագահական ընտրություններում:

«Ազգի» ունեցած վստահելի տեղեկությունների համաձայն, այդ շրջանակները դեռեւս վերջնական ընտրություն չեն կատարել ընդդիմության միացյալ թեկնածուի հարցում: Միացյալ Նահանգներում հունիսի երկրորդ կեսին կայացած Ստեփան Դեմիրճյան-Արմեն Մարգարյան հանդիպումը ենթադրաբար վերջինը չի լինի: Նրանք կարող են հանդիպել նաեւ Լոնդոնում՝ մեծահարուստ Վաչե Մանուկյանի «արքունիքում», վերջինս առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի մտերիմներից է, ունի Հայաստանի ներքաղաքական կյանքին միջամտելու հարուստ փորձ: Նախագահական ընտրություններին դեռեւս ինն ամիս ժամանակ կա, ինչն ընդդիմության միացյալ թեկնածու «երկներու» առումով բավարար ժամանակահատված է: Արմեն Մարգարյանը թերեւս ամենահարմար թեկնածուն կլիներ, եթե չլիներ նրա՝ ՀՀԸ-ի հետ ունեցած «արյունակցական» կապը: Բացի այդ, Արմեն Մարգարյանը, ինչպէս նշում են ԱՄՆ-ի հայկական քաղաքական շրջանակներում, ունի առողջական լուրջ խնդիրներ, եւ հայրենիքը «փոսից հանելու» նրա ջանքերը դժվար թե ցանկալի արդյունք տան:

Ստեփան Դեմիրճյանը ֆինանսական շրջանակների կողմից հարմար թեկնածու է դիտվում նախ եւ առաջ այն պատճառով, որ հայ ժողովրդից սիրված Կարեն Դեմիրճյանի որդին է, եւ երկրորդ, որը քիչ կարեւոր չէ, չունի անկախ քաղաքական գործչի համարում, արժանիքներ:

Շրջապատույտի մեջ է նաեւ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի անունը: Մեկ էլ տեսար՝ հայ ժողովուրդն աղաչի նրան վերադառնալ եւ շարունակել գահակալությունը:

ԹԱԹՈՒՆ ՀԱԿՈՒՅԱՆ, Վաշինգտոնէրեւան

ԹՇԿ^{3 1/2} 3ՄԿ

Թուրքիան համաձայն է, որ Ղարաբաղը միացվի Հայաստանին

ԲԱԸՈՒ, 1 ՀՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: «Ղարաբաղի կարգավիճակն արդեն համաձայնեցված է, եւ Ղարաբաղը լինելու է Հայաստանի կազմում», - այս մասին «Ազատություն» ռադիոկայանին ասել է բանակցային գործընթացին մոտ կանգնած ադրբեջանական մի աղբյուր:

«Ձերկալո» թերթը փորձել է հստակեցնել այդ լուրը: Ալիեի քարտուղարության նախկին ղեկավար Էրթար Նամազովն ասել է. «Ես կարող եմ հաստատել, որ ժամանակին նկատի էր առնվում հենց այդպիսի պլան եւ այդ պատճառով էլ մենք հրաժարական տվեցինք»: Արտաքին քաղաքականության հարցերով Ալիեի նախկին խորհրդական Վաֆա Գուլուզադեին հարցրել են, թե արդյոք նրա պաշտոնավարման օրոք քննարկվե՞լ է Ղարաբաղը Հայաստանին միացնելու հարցը: «Ես չեմ խոսի: Ես չեմ ցանկանում մեկնաբանել բոլորին հայտնի հարցերը», - պատասխանել է Գուլուզադեին: Բանակցային գործընթացին մոտ կանգնած աղբյուրը Ստամբուլում ասել է, թե Թուրքիան համաձայն է, որ Ղարաբաղը միացվի Հայաստանին», - գրել է «Ձերկալո»-ն:

Ըստ ադրբեջանական մամուլի, միջանցքների մասին Ալիեի հայտնի հայտարարությունում եւ հայկական կողմի արձագանքներում խոսվել է միայն այդ միջանցքների կարգավիճակի մասին, այսինքն՝ մյուս հիմնական հարցերն արդեն լուծված են:

Ըստ «Ազատության», տեղեկատվության արտահոսքը ծրագրավորված է նույնիսկ համաձայնեցված է, քանի որ հայկական կողմը կամ միջնորդները չեն դժգոհել (մի՞թե- խմբ.) Ալիեի նշված հայտարարությունից:

Վրաստանը կքննարկի Իրան-Հայաստան գազամուղի շինարարությանն աջակցություն ցուցաբերելու հարցը

ԵՐԵՎԱՆ, 30 ՄԱՅԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: ԱՊՀ անդամ պետությունների կառավարությունների ղեկավարների խորհրդի նիստին մասնակցելու նպատակով այցով Մոսկվայում գտնվող ՀՀ վարչապետ Անդրանիկ

Մարգարյանը մայիսի 30-ին հանդիպում է ունեցել Վրաստանի պետնախարար Ավթանդիլ Ջորբենաձեի հետ: Հանդիպման ընթացքում կողմերն անդրադարձել են փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցերի:

Հայաստանի վարչապետը երկու երկրների համար կարևորել է արխագական երկաթուղու շուտափույթ գործարկման անհրաժեշտությունը, անդրադարձել երկաթուղային բեռնափոխադրումների սակագնային քաղաքականության հարցում Վրաստանի տարբերակված մոտեցմանը Հայաստանի և Ադրբեջանի նկատմամբ, որից տուժում են հայ գործարարները: Ա. Մարգարյանն անդրադարձել է նաև Ջավախքի հայ համայնքի խնդիրներին՝ առաջարկելով Հայաստանի աջակցությունն այդ տարածաշրջանի սոցիալ-տնտեսական հարցերի լուծման գործում:

Իր հերթին Ա. Ջորբենաձեն հետաքրքրվել է Իրան-Հայաստան գազամուղի շինարարության նախագծի ճակատագրով, նշելով, որ նախագծի իրականացման գործում Վրաստանի հնարավոր աջակցության հարցը կքննարկվի իր երկրում: Վրաստանի պետնախարարին հետաքրքրել են նաև Հայկական ատոմակայանի անվտանգ շահագործման վերաբերյալ Հայաստանի մոտեցումները: Ի պատասխան Ա. Մարգարյանը նշել է, որ ՀԱԷԿ-ի շահագործումն այժմ բավական անվտանգ է, և Հայաստանը դրա փակման մասին կարող է խոսել միայն այլընտրանքային էներգիայի աղբյուրներ ունենալու դեպքում, որի ուղղությամբ աշխատանքներ տարվում են:

Ըստ ՀՀ կառավարության Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչությունից տրամադրած հաղորդագրության, Հայաստանի և Վրաստանի վարչապետները պայմանավորվել են կարևոր և օպերատիվ լուծում պահանջող հարցերը քննարկել և լուծել ուղղակի, անմիջական երկխոսության միջոցով:

Մեծարվեց միջազգային լրագրող Ջորջ Տեր-Բարթոլո

Նամակ է ստացվել ներկայումս ամենաբարձր-աստիճան հայ դիվանագետ, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի հատուկ լրագրություններով տեղակալ Բենոն Սեւանից, որում գնահատանքի ջերմ խոսքեր են ասված Կիպրոսում հրատարակվող ազդեցիկ և երկրում 2-րդ մեծագույն տպաքանակ ունեցող «Մայփրս ուիքլի» շաբաթաթերթի հիմնադիրներից, խմբագիրներից և արտոնատերերից՝ միջազգային ճանաչման արժանա-ցած լրագրող Ջորջ Տեր-Բարթոլոյի հասցեին:

Ջորջը, որ «Մայփրս ուիքլին» է հիմնել, եղել է Կիպրոսում լրագրության հարգված այուներից: Իր և կնոջ՝ Լանայի համար մեծ գնահատանք է, որ որդիները՝ Սասիսն ու Երվանդը, իրենց հոր հետքերով հաջողությամբ մտել են լրագրության ասպարեզ և հրատարակում են «Մայփրս ֆայնենշլ միրոր» և «Փարոս» թերթերը:

Ջորջ Տեր-Բարթոլոյի լրագրողական գործունեության 50-ամյակին նվիրված մեծարման և գնահատանքի ցերեկույթը տեղի ունեցավ մայիսի 25-ին, ժամը 14:00-ին, Արամ Խաչատրյանի տուն-բանգարանի դահլիճում:

Ադրբեջանը ԱՄՆ-ի օգնությամբ կարողականացնի ռազմական օդանավակայանները

ԲԱԶՈՒ, 30 ՄԱՅԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Ադրբեջանի պաշտպանության նախարար գեներալ Մաֆար Աբիելը հայտարարել է, որ ամերիկյան փորձագետները ներկայումս ուսումնասիրում են Ադրբեջանի ռազմական օդակայանները: Դա իրականացվում է ԱՊՀ տարածքում գտնվող օդակայանների ուսումնասիրման ամերիկյան ծրագրի շրջանակներում, ըստ որի մասնավորապես նախատեսվում է արդիականացնել այդ օդակայանների մի մասը: Աբիելի խոսքերով, անցյալ շաբաթ այդ նպատակով Ադրբեջան է այցելել ՆԱՏՕ-ի փորձագիտական խումբը՝ գեներալ Լեալի Ֆուլերի գլխավորությամբ: «Ատոշիեթեդ պրես» գործակալության տեղեկացմամբ, նախարարը նաև նշել է, թե «ամնտություն կլինեք կարծել, որ ամերիկյան ռազմական օժանդակությունը կօգտագործվի ընդդեմ Հայաստանի»:

«Ալ Ղաիդան» Բաքվում հիմնվել է 80-ականների վերջին և աջակցել Ադրբեջանին Ղարաբաղյան պատերազմում

Ըստ ամերիկյան լրատվական կենտրոնի

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 27 ՀՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: «Ալ Ղաիդա» ահաբեկչական կազմակերպությունը 80-ական թվականների վերջին իր գրասենյակն է հիմնել Բաքվում և սկսել աջակցություն ցուցաբերել Ադրբեջանին Հայաստանի դեմ Լեռնային Ղարաբաղի համար մղած իր պատերազմում, հինգշաբթի հայտարարել է Washington ProFile ամերիկյան անկախ լրատվական կենտրոնը: 1993 թվականի սեպտեմբերին Ղարաբաղյան պատերազմին մասնակցելու համար Ադրբեջան են ժամանել 1.5 հազար աֆղան մոջահեդներ, նշում են ամերիկյան աղբյուրները: «1994 թվականի ամռանը նրանց թիվը հասել է 2.5 հազարի: Հայերի հետ մարտերում ծանր կորուստներից հետո աֆղանական բրիգադը լուծարվել է, սակայն նրա անդամներից շատերը մասնակցել են տարածաշրջանային այլ հակամարտությունների», գրում է լրատվական կենտրոնը:

«Արարատի» ցուցադրմամբ կբացվի Տորոնտոյի միջազգային կինոփառատոնը

ՏՈՐՈՆՏՈ, 3 ՀՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: «Ատոմ Երոյանի «Արարատ» ֆիլմի ցուցադրմամբ կմեկնարկի Տորոնտոյի միջազգային կինոփառատոնը», նշում է Ռոյթեր գործակալությունը: Նկատի ունենալով, որ նախորդ կինոփառատոնը տեղի է ունեցել սեպտեմբերի 11-ի ողբերգությունից առաջ՝ ֆիլմի գլխավոր դերասաններից Դեյվի Ալփայը նշել է. «Աշխարհը մեծապես փոխվել է վերջին կինոփառատոնից հետո, և «Արարատը» նոր աշխարհի շուրջ մտորումի է նման: Ես վստահ եմ, որ բացման ընթացքում ֆիլմը դիտողների համար կստեղծի համապատասխան զգացմունքային մթնոլորտ»:

**Ստամբուլում նոր հարձակում
հայկական եկեղեցու վրա**

ՍԱՍԲՈՒԼ, 26 ՀՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Ինչպես տեղեկացնում է պոլսահայ «Մարմարա» օրաթերթը, անհայտ անձանց կողմից կոտրվել են Ստամբուլի Քանդիլի թաղամասի հայկական եկեղեցու ապակիները, պոկվել է եկեղեցու զանգի պարանը եւ աղտոտվել եկեղեցու դուռը: Քանդիլիի եկեղեցու թաղային խորհրդի ատենապետ Տիգրան Գեորգյանի խոսքերով, միջադեպի մասին տեղեկացվել են թուրքական իրավապահ մարմինները, որոնք արդեն իսկ սկսել են հետաքննությունը: Նկատի ունենալով, որ անցյալ շաբաթ ռումբ էր պայթել Ստամբուլի Գալաթա թաղամասի Սբ. Գրիգոր Լուսավորիչ հայկական եկեղեցու մերձա-կայքում՝ «Մարմարան» գրում է. «Այնպիսի տպավորություն է, թե մենք վերադառնում ենք նախկին օրերին»:

**Հարեւան 4 երկրներից երեքում ոչնչացվում են
հայկական հուշարձանները**

ԵՐԵՎԱՆ, 27 ՀՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հայաստանի չորս սահմանակից պետություններից երեքում (բացառությամբ Իրանի) լայն թափով ոչնչացվում են հայկական պատմաճարտարապետական հուշարձանները: Այս մասին հայտարարեց Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող կազմակերպության երեւանյան գրասենյակի պատասխանատու Սամվել Կարապետյանը: Մասնավորապես Թուրքիան, ըստ Կարապետյանի, «ոչնչացնում է այնքան, որքան կարող է». «Թուրքիայի տարածքում, ըստ առկա տվյալների, գտնվել են 7000-ի չափ հայկական եկեղեցիներ: Պետք է նշել, որ 1974թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի տվյալների համաձայն, 1915 թ.-ից հետո կանգուն մնացած 913 շինություններից 464-ը լիովին ոչնչացվել են, 252ը՝ վերածվել փլատակների, իսկ 197-ը՝ վերանորոգման լուրջ կարիք ունեն»: Թուրքական կառավարությունից հայկական հուշարձանների նկատմամբ պատշաճ վերաբերմունք է պահանջում նաեւ Եվրախորհուրդը Հայոց ցեղասպանության ճանաչման մասին 1987 թ. հունիսին ընդունած բանաձեռով:

Ինչպես ընդգծեց Ս. Կարապետյանը, հայկական արվեստի գործերի լայնածավալ ոչնչացում է իրականացվում Ադրբեջանում: Նախիջեւանի Ջուղա քաղաքի խաչքարերով հարուստ հայկական գերեզմանատան 25%ը ադրբեջանցիները բուլդոզերով հողին են հավասարացրել 2 տարի առաջ: Այս միջադեպը նկատվել է իրանական կողմից, եւ հուշարձանների հետագա ոչնչացումը հաջողվել է կասեցնել: Ընդհանուր առմամբ, Ադրբեջանի տարածքում առկա են վաղ միջնադարից մինչեւ անցած դարասկիզբ ժամանակահատվածի 1600 հայկական հուշարձաններ: ԼՂՀ Քաշաթաղի շրջանի Բերձոր (Լաչին) քաղաքից 18 կմ հեռավորության վրա է գտնվում Ծիծեռնավանքը, որը 4կրդ դարի հայկական եկեղեցի է: 1983 թ. պայթեցվել են նույն շրջանի 13երդ դարում կառուցված եկեղեցին եւ Քարվաճառի Կամիշլի գյուղի միջնադարյան եկեղեցին:

«Հայ պատմաճարտարապետական հուշարձանները երբեք բարվոք վիճակում չեն եղել նաեւ Վրաստանում», նշում է կազմակերպությունը, պնդելով, որ եթե խորհրդային տարիներին դրանք պարբերաբար ոչնչաց-

վում էին, ապա ներկայումս վրաց աշխարհիկ եւ հոգեոր ալյերը այլափոխելով յուրացնում են: «Վերականգնման» անվան տակ շուրջ 3 տասնյակ վրացականացված եկեղեցիների եւ այլ կառույցների որմերից, ինչպես նաեւ խաչքարերի եւ տապանաքարերի վրայից բերված կամ ջնջված արձանագրությունների թիվն արդեն անցել է 300-ից: Մասնավորապես, Թբիլիսիի մերձակայքում գտնվող Թելեթ գյուղի Սբ. Գեորգ վանքի տաճարի եւ զանգակատան «վերականգնումից» արդյունքում ոչնչացվել են բարձր վեճը, մկրտարանը, հայերեն արձանագրություններով խաչքարերն ու տապանաքարերը:

Ըստ կազմակերպության տվյալների, հարեւան երկրներից միայն Իրանում է, որ հայկական հուշարձանները գտնվում են պատշաճ հոգածության ներքո:

Մարսելի հայ մշակույթի տան 26-րդ տարեդարձը

Մայիսի 25-ին Մարսելի հայ մշակույթի տունը ավանդական ճաշկերույթով տոնել է իր հիմնադրման 26րդ տարեդարձը, հաղորդում է Փարիզի «Յառաջ» օրաթերթը հունիսի 7-ի համարում: Ներկա են եղել մշակութային եւ եկեղեցական միությունների ներկայացուցիչներ: Հարավային Ֆրանսիայի հայրապետական պատվիրակի փոխանորդ Տարոն Կայս. Ճերեճյանի օրհներգից հետո հայ մշակույթի տան անունից խոսել է Ժիրայր Շալճյանը, որը շեշտել է ֆրանսահայ գաղութում այդ հաստատության տեղն ու դերը, գնահատել հիմնադիրների վաստակը եւ գոհունակությամբ արձանագրել նոր անդամների գիտակից վերաբերմունքը:

Օրվա պատվո նախագահությունը ստանձնել է համայնքի երախտաշատ բարերար Մուշեղ Դիլերճյանի որդին՝ Հրանտը: Իսկ ներկաները բացառիկ պատեհույթուն են ունեցել վայելելու ներկայությունն անվանի քատերագիր Պերճ Չեթունցյանի, որ Մարսել է ժամանել ներկայացնելու իր «Ամենատխտուր մարդը» գրքի ֆրանսերեն թարգմանությունը՝ կատարված Ռոբերտ Տեր-Մերկերյանի կողմից: «Մշակույթը մեր ներկայությունն է ժամանակի մեջ, մեր անցագիրն՝ աշխարհի մեջ, եւ մեր ինքնության վկայությունը: Մեկ ազգ, մեկ մշակույթ կարգախոսը պետք է իրագործվի», ասել է նա:

Ժ. Փափազյան.«Մշակույթն է մեզ ներկայացնողը»

Հայտնի բեմադրիչ եւ դերասան Ժիրայր Փափազյանը ծնվել է Կահիրեում: 12 տարեկանում Եգիպտոսը թողնելով՝ գուտ հայկական կրթություն է ստացել Կիպրոսի Սելզոնյան վարժարանում, իսկ 1971-1976 թթ.՝ Երեւանի գեղարվեստաթատերական ինստիտուտում: Իր իսկ բնորոշմամբ, ինքը «թատրոնի մարդ է լայն իմաստով»: Փափազյանի եռանդուն մասնակցությամբ 2001 թ. ԱՄՆ-ում բեմադրվեցին «Արշակ Բ» եւ «Անուշ» օպերաները: Փարիզում նրա հիմնած «Տիգրան Չուխաջյան» հետազոտական կենտրոնում վերականգնվում է հարկ եղած դեպքում հրատարակվում են երաժշտական գործերի բնօրինակները: Խոսքը մասնավորապես 19-րդ դարասկզբի պոլսահայ մշակույթի մասին է (օպերաներ, օպերետներ, թատերախաղեր): Փափազյանը «Ազադ մագազին» հանդեսին տված հարցազրույցում նշում է, որ ինքը մտադիր է ի հայտ բերել եւ կյանքի կոչել նաեւ արեւելահայ երաժշտական մշակույթի գործեր:

Մայիսի կեսերին, 2 օր անընդմեջ, Ֆրանսիայի Կուրբվուա քաղաքում ներկայացվեց Էժենի Ալեսյանի «Ամագոնուի» օպերան, որի բեմադրիչը Փափազյանն է: Ներկայումս նա աշխատում է «Ջարդեր» երաժշտական կոմեդիայի վրա: Ապագայում կուզենար «Արշակ Բ» եւ «Անուշ» օպերաները ներկայացնել նաեւ Ֆրանսիայում, եվրոպական այլ երկրներում: «Մշակույթն է մեզ թույլ տվել ներկա լինել Յերդ հազարամյակի սկզբում, եւ նա է մեզ պահպանելու», ընդգծում է Ժիրայր Փափազյանը:

Փարիզի «Աղքատախնամ ընկերակցությունը» 112 տարեկան է

1890 թ. Փարիզում հիմնվեց «Հայոց բարեգործական ընկերակցությունը», որը հետագայում վերանվանվեց «Աղքատախնամ ընկերակցություն Փարիզի հայոց»: Այն հայտնի է նաեւ «Ընկերային օգնության հայկական ընկերակցություն» անունով: Հունիսին տարաբնույթ միջոցառումներով նշվեց հաստատության 112-ամյակը: Փարիզի «Աշխարհ» թերթի տվյալներով, մինչեւ 1945 թ. «Աղքատախնամ ընկերակցության» գործունեությունը սահմանափակ է եղել: 1947 թ.-ից կազմվել է իրականացվել են նոր ծրագրեր:

Ժամանակի պահանջ էր ծերանոց ունենալու խնդիրը: Ֆրանսիայի կառավարության, գաղթականների միջազգային կազմակերպության վստահությունը վայելող ընկերակցությունը Գյուլբենկյան հաստատության նպաստների շնորհիվ բացեց 3 հանգստյան տուն՝ երկուսը Փարիզի շրջանում եւ մեկը՝ Միջերկրականի ափին: «Աղքատախնամ ընկերակցության» մատչանում դրվատական գրառումներ են արել Ամենայն հայոց Վազգեն Ա, Գարեգին Ա, Գարեգին Բ կաթողիկոսները, Սողոմոն Թեղեղյանը, Ռուբեն Որբերյանը, Արշակ Չոպանյանը եւ ուրիշներ:

Ընկերակցության վարչական խորհուրդը կազմված է 15 անձանցից, որոնց ընտրում է ընդհանուր ժողովը 4 տարին մեկ: Գործունեության գլխավոր ոլորտը 80-ական մահճակալ ունեցող 3 հանգստյան տների խնամակալությունն է: Այնտեղ իրենց կյանքի խաղաղ աշունն են անցկացնում 240 տարեց անձինք: Այդ հանգստյան տներից մեկում է իր մահկանացուն կնքել գրող Շահան Շահնուրը:

Բացի հանգստյան տներից, հաստատությունն ունի նաեւ ընկերային օգնության ընդլայնված ծառայություն: Մասնավորապես, ամեն տարի կրթաթոշակ է հատկացնում 40-50 ուսանողի, նյութապես օգնում է հայկական դպրոցներին, հովանավորում արվեստագետների (երաժիշտներ, երգիչներ) գործունեությունը: Ստանձնել է Երեւանի թիվ 55 գիշերօթիկ դպրոցի խնամակալությունը, որտեղ սովորում են միակողմանի եւ երկկողմանի ծնողազուրկ, զոհված ազատամարտիկների, բազմազավակ ընտանիքների եւ ծայրահեղ աղքատ ընտանիքների 294 երեխաներ:

Ընկերային օգնության առաքելությունն իրականացվում է հասույթի գլխավոր աղբյուրների հաշվին, որոնք են անդամավճարները, դաշտահանդեսների եկամուտները, ծաղկեպսակի փոխարեն արվող նվիրատվությունները, բարեսեր հայրենակիցների կտակներն ու նվիրատվությունները:

Դավիթ Նալբանդյանը քառորդ եզրափակչում

Թենիսի Ուիմբլդոնյան մրցաշարում հաջող է հանդես գալիս արգենտինահայ Դավիթ Նալբանդյանը, որը 8 ուժեղագույն թենիսիստների հետ պայքարում է գլխավոր մրցանակի համար: 1/8 եզրափակչում Դավիթը համառ մրցապայքարում, չորս խաղափուլում հաղթեց ավստրալացի Վեյնա Արթուրսին (6և4, 7և6, 2և6, 7և6): Չեմպիոնի կոչման հիմնական հավանորոշներից պայքարը շարունակում են միայն Լլեյթոն Հյուիթը եւ Թիմ Հենմանը: Հետաքրքրական է, որ ավստրալական թենիսի լեգենդ Պետ Կեշի համոզմամբ, Հենմանը չի կարողանա դառնալ մրցաշարի հաղթող: Կեշը նշել է, որ եթե Հենմանը հաղթի, ապա ինքը պատրաստ է կանացի հագուստով ներկայանալ հեռուստատեսային շուրին: Կեշի կարծիքով, հաղթելու ավելի մեծ հնարավորություն ունի Հենմանի հայրենակից Գրեգ Ռուսեցկին:

Հենմանը մեծ դժվարությամբ պարտության մատնեց շվեյցարացի Միշել Կրատոշվիլին (7-6, 6-7, 4-6, 6-3, 6-2), իսկ Հյուիթը հաղթեց Ռուսաստանի վերջին ներկայացուցչին՝ Միխայիլ Յուժնուն (6-3, 6-3, 7-5): Քառորդ եզրափակիչ են մտել նաեւ Նիկոլաս Լապենինն, Անդրեն Սան, Սյենգ Շալկենը:

Կանանց մրցաշարում 26-ամյա մոսկվացի Ելենա Լիխովցեւան թենիսիստուհու իր գործունեության ընթացքում առաջին անգամ իրավունք ստացավ հանդես գալու Ուիմբլդոնի քառորդ եզրափակչում: Նա հաղթեց բուլղարուհի Մագդալենա Մալեւային (6-4, 6-3): Հերթական արգելքը հաջողությամբ հաղթահարեցին Ուիլյամս քույրերը: Վենուսը բավական արագ «հաշիվները մաքրեց» Լիզա Ռեյմոնդի հետ (6-1, 6-2), իսկ Սերենան հաղթեց Չանդա Ռուբինին (6-3, 6-3): Վերելքով հանդես եկող Դանիելա Խանուկովան ավելի ուժեղ գտնվեց հարավսլավացի Ելենա Դոկիչի հետ մրցախաղում (6-4, 7-5): Անհաջողության մատնվեց Ելենա Դեմենտևան՝ զիջելով Ժյուստին Էնենին (6-7, 6-7): Քառորդ եզրափակիչ են մտել նաեւ Մոնիկա Սելեշը եւ Ամելի Մորիսոն:

ՌԱԿ միացյալ վարչություն Մ. Նահանգների Արեւելյան շրջանի եւ Կանադայի համար

Մ. Նահանգների Արեւելյան շրջանում եւ Կանադայում գործող ՌԱԿ ակումբներն ու տարբեր մարմինները ներկայացնող պատվիրակները վերջերս ժողով են գումարել Ուոթերթաունի (Բոստոն) «Պայքար» հաստատության մեջ ու ստեղծել են մեկ եւ միացյալ վարչություն, որի տնօրինության տակ են գտնվելու այսուհետեւ Արեւելյան շրջանի ու Կանադայի կուսակցական բոլոր մարմինները, ակումբներն ու լրատվամիջոցները:

Ժողովը վարչության ատենապետ է ընտրել Ֆիլադելֆիայից ՌԱԿ երկարամյա անդամ Բաբկեն Սկրյանին, փոխատենապետ Նորայր Սկրտչյանին (Նյու Ջերսի), ատենադպիր Մարո Պետրոսյանին (Չիկագո), գանձապահ դոկու. Ժակ Գյուրլեքյանին (Նյու Ջերսի), վարչականներ Անտուան Բազարբաշյանին (Ֆիլադելֆիա), Հրաչ Բոյաջյանին (Տորոնտո), Արսեն Դեմիրճյանին (Չիկագո), Ջորջ Մանուկյանին (Մոնրեալ), Գրիգոր Մալբաշյանին (Նյու Յորք) եւ Հակոբ Երեցյանին (Տորոնտո):

ԹՎ ՇԽԱ ԸՇ 1-ՇԾ

Մենք բոլորս հայ քաղաքակրթության ու արժեքների կրողներն ենք, որոնց պահպանման ու զարգացման համար այսօր պատմությունը մեր ուսերին դրել է ծանր պատասխանատվություն:

20-րդ դարի սկզբին մեր ժողովուրդը կրեց սհավոր հարված, երբ Օսմանյան Թուրքիան ծրագրեց և գործադրեց մարդկության նորագույն պատմության մեջ առաջին ցեղասպանությունը՝ բնաջնջելով ավելի քան 1,5 միլիոն հայերի, և կործանեց հարյուրամյակների ընթացքում Արևմտյան Հայաստանի սեփական բնօրրաններում հայերի ստեղծած նյութական ու հոգևոր-մշակութային արժեքները:

Դարասկիզբը նաև եղավ հաղթանակի հանգրվան: Ծառանալով հայաջնջումի քաղաքականության դեմ՝ անհավասար պայմաններում մեր ժողովուրդը դիմեց ինքնապաշտպանության և հերոսամարտերով 1918 թվականի մայիսի 28-ին ամրագրեց նոր ժամանակների հայ անկախ պետականությունը՝ Հայաստանի Առաջին Հանրապետությունը:

Շուտով սակայն իրադրությունը դարձավ օրհասական, երբ 1920 թվականին թուրքական նոր հարձակման հետևանքով մասնատվեց Հայաստանի Առաջին Հանրապետությունը, որի կործանարար հետևանքները առ այսօր կրում է հայ ժողովուրդն ու հայոց երկիրը:

Հաղթահարելով Մեծ Եղեռնի հետևանքները և մեր ազգի առջև ծառայած բազմապիսի խոչընդոտները՝ խորհրդային շրջանում անկախ պետականության բացակայության պայմաններում մեր ժողովուրդը կարողացավ ոչ միայն պահպանել, այլև զարգացնել կրթությունն ու մշակույթը, իսկ դարավերջի բարձրակետը հանդիսացավ այսօրվա անկախ և ինքնիշխան Հայաստանի Հանրապետությունը:

Այսօր մեր պետության պահպանումը, նրա ամրապնդման ու զարգացման ապահովումը աշխարհում ապրող բոլոր հայերի սրբազան նպատակն ու պարտքն է, նրա հզորացումը բոլորի առաքելությունն է և անվիճելի առաջնահերթությունը, որպես մեր կենսական խնդիրների լուծման լծակ, գլխավոր միջոց և հնարավորություն:

Հայաստանը բոլորի հայերի հայրենիքն է՝ կարգախոսով հայ պետականության վերելքին ծառայելը պետք է դառնա յուրաքանչյուր հայի կյանքի հիմնական կոչումը: Յուրաքանչյուր հայ պետք է առաջնորդվի Ազգային Վերագարթոնքին իր անվերապահ մասնակցությունը բերելու պատրաստակամությամբ, որպեսզի կարողանանք ապահովել Հայաստանի և Հայության գոյատևումը, առաջադիմությունն ու զարգացումը:

Ներկայումս անկախ պետականության պայմաններում, Հայաստան-Մփյուռք փոխհարաբերությունները և գործակցությունը ենթադրում են որակական նոր մոտեցումներ ու մակարդակ, նոր պարտավորություններ:



Հայերը չեն կարող 'օտարներ' լինել իրենց հայրենիքում, և Հայաստանի Հանրապետությունը նախաձեռնել է հաղթահարել երկքաղաքացիության բացառման սահմանադրական արգելքը՝ հնարավորություն ընձեռելով յուրաքանչյուր հայի լիարժեք ներկայություն հաստատել իր հայրենիքում:

Հայաստանի Հանրապետությունը որպես պետություն հանձնառու է իր բոլոր կարելիություններով ապահովել այն անհրաժեշտ պայմանները, որոնք յուրաքանչյուր հայի հնարավորություն կընձեռեն լիարժեք մասնակցություն ունենալ պետության կայացման, ամրապնդման և զարգացման գործում:

Մփյուռքն իր ինքնությունն ու ինքնահաստատումը պետք է կապի ոչ միայն ազգային պատկանելիության ու անցյալի, այլ նաև պետության գոյության, նրա առավելությունների, նրա հանդեպ պատասխանատվության հետ, իր անմիջական մասնակցությունը ունենալով Հայաստանի համընդհանուր զարգացման գործում՝ զուգակցելով գործարար շահագրգռվածությունն ու հայրենիքի նկատմամբ հոգեկան պարտքի կատարումը:

Մեր նորագույն պատմության մեջ մեր ժողովրդի մեծագույն նվաճումն է Արցախի ազատագրումը, որտեղ դրսևորվեց Հայության անսասան կամքը իր պատմական արդարացի իրավունքների նկատմամբ, և այն դարձավ համազգային միասնության, համախմբվածության ու վճռականության վառ ապացույց:

Այսօր մենք կրկին անգամ վերահաստատում ենք մեր ամբողջական պատասխանատվությունը և համապարփակ աջակցությունը մեր ժողովրդի հերոսական մաքառումներով ծնված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազատ ապրելու և ինքնորոշվելու իր պահանջների նկատմամբ:

Մենք վերահաստատում ենք նաև մեր պատրաստակամությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման, Արցախի ժողովրդի բարեկեցության մակարդակի բարձրացման և հայրենի հողի վրա նրանց նյութական ու հոգևոր պահանջմունքների լիարժեք բավարարման համար անհրաժեշտ պայմանների ստեղծման, նրա անվտանգ, ապահով գոյության ապահովման հարցում:

Հայաստանի անկախացումից հետո Սփյուռքը հայտնվեց նոր իրողությունների առջև և նորանկախ Հանրապետությանը բաժին հասած ծանր փորձությունների ու վտանգավոր մարտահրավերների ժամանակ ցուցաբերեց և շարունակում է ցուցաբերել աննախադեպ՝ նյութական, քաղաքական, բարոյական աջակցություն:

Միաժամանակ նույնն են իր առջև ծառայած ավանդական խնդիրները, որոնցից գլխավորը՝ աշխարհի տարբեր հյուսիսային երկրներում քաղաքական, մշակութային տարբեր պայմաններում, ազգային նկարագրի, ավանդույթների, մշակույթի և ինքնության պահպանումն ու վերարտադրությունն է:

Խորհրդատուները վերահաստատում է աշխարհի բոլոր երկրներում Հայոց Ցեղասպանության միջազգային ճանաչմանը հասնելու իր վճռականությունը: Խորհրդատուները ողջունում է աշխարհի մայրաքաղաքներում հայ ժողովրդի արդարախոհ բարեկամների կողմից տարված բոլոր այն ճիգերը, որոնք ապացուցում են ցեղասպանության հարցում համաշխարհային հանրության աճող հանձնառությունը:

Մեր հավաքական ամբողջության բոլոր մասերը սերտորեն շաղկապված են և մեր խնդիրների լուծումը պայմանավորված է համազգային ներդաշնակ և միասնական գործակցությամբ, որդեգրելով գործելակերպի այնպիսի չափանիշներ ու սկզբունքներ, դրսևորելով կազմակերպվածության այնպիսի մակարդակ, որոնք մեզ համար կապահովեն առաջադիմություն և զարգացում, կդառնան ուժի և հզորության աղբյուր:

Մենք համոզված ենք, որ ժողովրդավարական սկզբունքները և մարդու իրավունքներն ու ազատությունը առաջնային նշանակություն ունեն պետական ու համայնքային հաստատությունների գործունեության մեջ թե՛ Հայրենիքում, թե՛ Սփյուռքում:

Մեզ համար հիմնարար արժեքներ են խաղաղությունը, ժողովուրդների բարեկամությունն ու փոխշահավետ համագործակցությունը, մարդու և ազգերի ազատ ապրելու ու զարգանալու իրավունքը, խղճի և դավանանքի ազատությունը:

Մենք վճռականորեն դատապարտում ենք սեպտեմբերյան իրադրությունը, որպես վտանգավոր չարիք մարդկության համար:

Մենք պատրաստակամ ենք այսուհետև ևս մեր պետական, ազգային ու տեղական հաստատությունների ու կառույցների գործունեությունը կազմակերպել ժողովրդավարության սկզբունքներով, ապահովելով անհրաժեշտ պայմաններ նրա անդամների կարողությունների լիարժեք դրսևորման համար:

Մենք ընդգծում ենք Հայաստանի Հանրապետության գերագույն պատասխանատվությունը և դերը հայության համախմբման գործում, որը հանձնառու է հնարավորություն ու պայմաններ ապահովել յուրաքանչյուր հայի լիարժեք մասնակցությունը բերելու համազգային խնդիրների լուծմանը:

Մենք հանձնառու և հետևողական ենք մեր ազգային իրավունքներն ու շահերը պաշտպանելու, համերաշխությունն ու համախմբվածությունը ամրապնդելու, մեր խնդիրները, իդձերն ու երազները հավաքական միասնությամբ իրականացման հարցում, ի փառս հայ ժողովրդի ապահով, անվտանգ զարգացման ու բարգավաճման:

Հայաստան-Սփյուռք երկրորդ խորհրդատուների կողմից ընդունված ԾՐԱԳՐԵՐ

Երևան, 28 մայիսի, 2002 թ.

Որպես Հայաստան - Սփյուռք Համաժողովի արդյունք՝ մենք ակնկալում էինք յուրահատուկ նախագծերի ընդունում, ինչպես նաև Հայաստանի և Սփյուռքի ընդհանուր գործակցության մեխանիզմների քննարկում:

Համաժողովի ծրագրման, ինչպես նաև այս երկու օրերի ընթացքում տեղի ունեցած թեմատիկ քննարկումների ժամանակ առաջարկվեցին բազմաթիվ յուրահատուկ և ընդհանուր նախագծեր ու առաջադրվեցին խնդիրներ: Բոլոր նիստերի ամփոփումները, հատուկ ներկայացված տեքստերը, ինչպես նաև արդեն նշված առաջարկներին պատասխաններն ու դրանց շուրջ մեկնաբանությունները տեղադրվելու են www.armeniadiaspora.com-ում:

Կից ներկայացվում են այն առաջարկները, որոնք ընտրվել են՝ լինելով անհրաժեշտ, իրագործելի և ներագրող Հայաստանի և Սփյուռքի վրա: Ակնկալում ենք, որ այդ նախագծերը միջոց կհանդիսանան իրագործման և պլանավորման համար առաջարկված մեխանիզմների օպտի-

մալացման համար: Հուսով ենք նաև, որ այդ նախագծերի իրագործման ընթացքում, Հայաստան-Մփյուռք համագործակցության համար այդպիսի մեխանիզմները կհամակարգվեն:

Ի վերջո, մենք ակնկալում ենք, որ այդ նախագրծերի միջոցով, պարբերական պաշտոնական և ոչ-պաշտոնական հանդիպումներ տեղի կունենան համագործակցության մեջ շահագրգիռ կողմերի միջև: Այսպիսով, պարբերական համապարփակ Հայաստան-Մփյուռք համաժողովները միջոց և ֆորում կդառնան կազմակերպություններին և անձանց համապատասխան նախագծերում ներգրավելու համար, որտեղ յուրահատուկ նախագծերը ընդունվում են շարունակական կերպով, իսկ ավարտվածները՝ ամփոփվում:

ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Հայաստանին անհրաժեշտ է 1915թ-ի Հայոց ցեղասպանության հետազոտական և հրատարակչական կենտրոն: Չնայած այն հանգամանքին, որ անցած 87 տարիների ընթացքում կատարվել են պատմական, վերլուծական, նկարագրական, հուշագրական, կենսագրական և անձնական հետազոտություններ, անհրաժեշտ է ընդարձակել այս ջանքերը, համակարգել արդեն կատարված աշխատանքը և այս ուղղությամբ խրախուսել գիտնականների նոր սերնդին: Դա կլինի մի կենտրոն, որը կզարգանա, ի մասնավորի՝ կլրացնի իր անձնակազմը Հայաստանի և Մփյուռքի համատեղ ջանքերով:

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԻՏՏՈՒԱԼ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Տեղեկատվական տեխնոլոգիաների հնարավորություններից օգտվելով՝ այս ծրագրով ստեղծվելու է Բնտերնետի մեջ խարսխված մի համալսարան, որի միջոցով կտրամադրվեն հայագիտական նյութեր և դասընթացներ: Արխիվների բազայի և օնլայն դասերի համատեղումը դասախոսներին, գիտնականներին և ուսանողներին գաղափարներ փոխանակելու, անցյալն ուսումնասիրելու, ներկայի և ապագայի խնդիրները վերլուծելու հնարավորություն կընձեռի: Գործող հայագետների կողմից մշակված ուսումնական ծրագիրը կծառայի իբրև մոդել՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում և քոլեջներում հայագիտական ուսումնասիրությունների համար: Այս մեթոդը թույլ կտա համայն աշխարհի հայությանն օգտվել հայագետների փոքրաթիվ, սակայն արժեքավոր համայնքի գիտելիքներից, խրախուսել այս բնագավառ նոր ուսանողների մուտքը և կհանգեցնի ընդհանուր տեղեկատվական և գիտական բազայի ստեղծմանն այդ աշխարհագրապես տարաբնույթ համայնքի շրջանակներում: Այս վիրտուալ, փոխադարձաբար օգտագործվող մտավոր տարածքը կհանգեցնի համագործակցության նոր աշխատանքների և ուսումնասիրությունների իրականացմանը:

Ծրագրեր

ԴՊՐՈՑՆԵՐԻ ԿՈՄՊՅՈՒՏԵՐԻԶԱՑԻԱ

Ծրագրի նպատակն է կոմպյուտերացնել Հայաստանի բոլոր 1500, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի 200 դպրոցները: Սրանցից 300-ը պիտի սկսեն գործել որպես այդպիսիք համակարգված ցանցով մինչև 2003թ-ը՝ արդեն առկա ծրագրերից տրամադրվող միջոցների շնորհիվ: Ծրագրային այս նպատակը պիտի իր ամբողջական լուծումը ստանա մինչև 2005թ-ը: Կրթությունը Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում պետք է շարունակի լինել արդյունավետ և համաշխարհային չափանիշներին համապատասխանող, որպեսզի շրջանավարտները պատրաստ լինեն կիրառել տեղեկատվության դարաշրջանի տեխնիկական և արձագանքել դրա մարտահրավերներին: Այսպիսով հնարավոր կլինի հաղթահարել գոյություն ունեցող անդունդը և սնուցել կրթության զարգացումը: Անհրաժեշտ է ծրագիր՝ միջոցներ հայթայթելու, իրագործելու, սարքավորումներ գնելու, մարդկանց վերապատրաստելու, սովորեցնելու և ներքին կառավարումը կազմակերպելու նպատակներով:

**ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Հայերը և Հայաստանը, լինելով մեծաթիվ սփյուռք ունեցող ազգային պետություն, մեծապես պիտի կարևորեն այն, ինչ սովորում են իրենք իրենց անցյալի և ժառանգականության մասին, քանի որ դրանով են մեծապես պայմանավորված իրենց մասին սեփական պատկերացումները, ինչպես նաև ապագան կերտելու իրենց ուղին սահմանելու ձևերը: Այս հանձնաժողովը հարթակ կտրամադրի հայոց կրթության մասնագետների համար, որպեսզի նրանք հանդիպեն և քննարկեն Հայոց լեզուն, մշակույթը և պատմությունը դասավանդելու զանազան մոտեցումները: Նման ուսումնական ծրագրի զանազան տարրեր կարող են կիրառվել ուսուցիչների կողմից Հայաստանի և Սփյուռքի դպրոցներում:

**ԳՏՆԵԼ ԵՎ ՕԺԱՆԴԱԿԵԼ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ**

Տարբեր համալսարաններում Հայաստանից, Լեռնային Ղարաբաղից և Սփյուռքից հայ ուսանողների առկա և ապագա ներուժը օգտագործելու նպատակով ուսանողների և պրոֆեսորների հանձնաժողովը կմշակի ծրագիր, որի շնորհիվ պետք է գտնվեն, անհրաժեշտ հունով ուղղվեն և օժանդակություն ստանան համապատասխան ուսանողները: Հանձնաժողովը կմշակի անհատներին, ինչպես նաև տեսանելի գործողություններ նախաձեռնելու կարող ուսանողական խմբերին ուշադրություն և աջակցություն տրամադրելու ուղիներ: Ուսանողների աշխատանքային ցանցը և արխիվների բազան ելրնթաց կհանդիսանան համալսարանական կրթություն ստանալու ձգտող և դրա ապագա նշանակությունը հասկացող ունակ և արժանի ուսանողների համար կրթաթոշակներ հայթայթելու աղբյուրների, քաղաքացիական մասնակցությունը խրախուսելու և բարձրագույն կրթություն ստանալը հեշտացնելու համար:

**ԲԺՇԿԱԿԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ**

Այս համալիր բազմակողմ ծրագրի նպատակն է Երևանում համաշխարհային մակար-

դակի բժշկական կենտրոն հիմնելու և ստեղծելու համար մեկտեղել Սփյուռքի, Հայաստանի և Արցախի եղած ռեսուրսները: Այդ կենտրոնի հիմնական նպատակն է լինելու զարգացնել և մատուցել բժշկական ծառայություններ, որոնք կխարսխավեն արդիական ամենանոր սարքավարումներով և տեխնոլոգիաներով հազեցած մի հիվանդանոցում, ինչպես նաև մասնագիտական ինստիտուտներում, կլինիկաներում, կարճա- և միջնաժամկետ ծառայությունների բուժհիմնարկներում, որոնք մատչելի կլինեն այս տարածաշրջանի հիվանդների համար: Բացի եկամտաբեր և աշխատատեղեր ստեղծող լինելուց, այս ծրագրի միջոցով կբարձրացվի առողջապահության մակարդակը Հայաստանում, ինչպես նաև սփյուռքահայ բժիշկներին և դասախոսներին Հայաստան գալու և առողջապահության կազմակերպմանը մասնակցելու հնարավորություն կընձեռվի:

ՍՓՅՈՒՌՔԻ ԹԱՆԳԱՐԱՆ

Հայաստանում Սփյուռքի թանգարան հիմնադրելու նպատակը համայնքների կյանքի նյութական մշակույթի տարրերի, պատկերների, նյութական և արխիվային վկայությունների ու նկարագրությունների մի պահոց ստեղծելն է: Այն բոլոր վայրերից, ուր հայերը ճանապարհորդել ու բնակություն են հաստատել, նյութերի համադրմամբ այս թանգարանը կարձանագրի հայրենիքից հեռու մեր բոլոր անհամատեղելի օջախների բազմազանության մեջ թաքնված միասնությունը: Բնական է, որ այս թանգարանը պետք է կառուցվի Հայաստանի և Սփյուռքի համատեղ ջանքերով: Նմանապես բնական է, որ այս թանգարանը պետք է լինի Հայաստանում, Հայաստանի կառավարության կողմից տրամադրված հողի վրա:



Այսու շնորհաւորում ենք Ազատ Մաթեանին՝ Նարեկացու թարգմանութեան համար ստացած շքանշանի առիթով:
«Լոյսի» խմբագրութիւն

Համիդյան կոտորածները եւ Ժորժ Կլեմանսոն

Համիդյան կոտորածները դատապետող գործիչների թվում առանձնանում է ֆրանսիացի ականավոր պետական եւ քաղաքական գործիչ, 1875 թ. ի վեր ֆրանսիական ռադիկալների պարագլուխ, 1906-1909 եւ 1917-1920 թթ. Ֆրանսիայի վարչապետ, գրական հարուստ ժառանգություն թողած (թե՛ քաղաքական, թե՛ գեղարվեստական բնույթի 26 գրքերի հեղինակ) Ժորժ Կլեմանսոն (1841-1929), որը XIX դարի 90-ական թվականներին Եվրոպայում մեծ հեղինակություն էր վայելում: 1896 թ. Փարիզում լույս տեսած՝ հայերի ցեղասպանության անսքող պատկերը հավաստող «Կոտորածները Հայաստանում: Չոհերի վկայությունները» (Les massacres d'Armenie. Temoignages des victimes, Paris, 1896) խորագիրը կրող փաստաթղթերի ժողովածուին կից առաջաբանում նա տվել է ջարդարարների խստաշունչ գնահատականները, որոնք արժանի են ուշադրության:

Խնդրո առարկա գրքում զետեղվել են Արեւմտյան Հայաստանի եւ Կիլիկիայի քսան քաղաքներում (Տրապիզոն, Էրզրում, Երզնկա, Մալաթիա, Կեսարիա, Արաբկիր, Վան, Մարաշ եւ այլն) տեղի ունեցած իրադարձություններն արտացոլող՝ հայ ականատեսների վկայությունները, այն է՝ յուրաքանչյուր բնակավայրից ստացված մեկական նամակ: «Այս ժողովածուն, ինչպես նշում է Կլեմանսոն, խիստ պատեհ է այն պահին, երբ սկսում են կրկին խոսել Հայաստանի վիլայեթներում տեղի ունեցող խռովությունների մասին: Հայտնի է, թե ինչ իմաստ է պարունակում այս բառը: Այսպիսին է հայերի սիստեմատիկ կոտորածները մատնանշող պաշտոնական մեղմ արտահայտությունը: Այս տեսակետից, անտեղյակ ձեւանալն այլեւս թույլատրելի չէ»:

Համառոտակի անդրադառնալով Արեւմտյան Հայաստանն արյունակեղ արած իրադարձություններին՝ Կլեմանսոն դրանք բնութագրում է իբրեւ «նողկալի», «սոսկալի» տեսարաններ, իսկ հայ ժողովրդի կրած տառապանքները՝ «զարհուրելի մարտիրոսություն»: Նա ցավով ընդգծում է, որ թերեւս անհնար կլինի երբեւէ ունենալ XX դարի նախաշեմին «սպրող մարդկության համար անպատվաբեր այն տեսարանների ամբողջական պատկերը, որոնց թատերաբեմն է դարձել Անատոլիան անձայրածիր ամիսների ընթացքում»:

Հղելով Բեռլինի վեհաժողովի կողմից ընդունված պայմանագրի 61-րդ հոդվածը, նա տալիս է դրան հաջորդած անցքերի հետեւյալ դիպուկ գնահատականը. «Պայմանագրերը խաբեություններ են, սուլթանի խոստումները, բոլոր տերությունների պատվիրակների կողմից ստորագրված պայմանագրերի հովանավորական բնույթի հոդվածները՝ մեռյալ

տառեր: Ոչինչ չի փոխվել, ոչինչ չի արվել, այնժամ, երբ մեկ վճռական խոսքը կարող էր բավարար լինել այդչափ աղետները կանխելու համար՝ նույնիսկ ոչինչ չի ասվել»: Ընդդիմության մեջ գտնվող, 1893 թ. ի վեր դեպուտատական մանդատ այլեւս չունեցող Կլեմանսոնի շանթերը մասնավորապես անողոր են ֆրանսիական պետության ղեկավարների հանդեպ: «Մեր կառավարողները ոչինչ չեն արել եւ, բացի դրանից, այսօր էլ ոչինչ չեն անում խոչընդոտելու համար այդ վայրագության կրկնությանը»:

Կլեմանսոն, համաձայն նրա կենսագիր Ժ. Լոկոնտի բնորոշման, «հանուն գաղափարի պայքարող մարտիկ է, այլ ոչ թե պամֆլետագիր»: Ուստի, ընձեռված բարենպաստ առիթը նրա ուշադրությունից չի վրիպել Վատիկանի գրաված անկարեկից դիրքորոշումը դատապարտելու համար: Այդ քայլն, անկասկած, պայմանավորված էր 80-90-ական թվականներին ռադիկալների կողմից կաթոլիկ եկեղեցու դեմ մղվող անզիջում պայքարով, որոնք ի շարս այլ խնդիրների, համառորեն առաջադրում էին եկեղեցին պետությունից անջատելու պահանջը: «Հռոմի եկեղեցին, որը մեծ ազդեցություն ունի միապետությունների եւ հանրապետությունների ժողովուրդների ու թագավորների վրա, արդյո՞ք այս առթիվ այն ամենն է արել, ինչ նրան թույլատրում են անել գործելուն նպաստող՝ նրա ունեցած բացառիկ միջոցները: Դա այդպես չի թվում», եզրակացնում է նա:

Չբավարարվելով սոսկ եղելությունների նկարագրությամբ կամ դրանց մեկնաբանությամբ, Կլեմանսոն առաջադրում է ճգնաժամային իրավիճակը հաղթահարելու իր տարբերակները: Ըստ նրա, «Օսմանյան կայսրությունում ազգությունների եւ կրոնների միջեւ թշնամանքը դադարեցնելու միակ միջոցը կառավարության կողմից ամենքի՛ մահմեդականների եւ քրիստոնյաների համար բարեհաճ վերաբերմունքի ապահովումն է»: Ուստի, սուլթանի տիրույթներում, համաձայն նրա համոզման, իշխանությունը հարկ է տրամադրել այնպիսի մի վարչակարգի, որը «հետեւողականորեն իրականացվող սպանության, կողոպուտի, մոլեռանդ բարբարոսների կողմից սանձազերծվող զագրելի բռնությունների փոխարեն» ի վիճակի լինի արդարադատության եւ իրավունքի հովանու ներքո խաղաղություն հաստատելու:

Ստեղծված անելանելի կացությունից դուրս գալու համար Կլեմանսոն պահանջում է ընտրել միակ հնարավոր՝ կոտորածների կասեցման ուղին: Ճիշտ է, հարցի լուծման նրա նախընտրած տարբերակը, ինչպես այդ ակնհայտ դարձավ շնորհիվ իրադարձությունների հետագա ընթացքի տրամաբանության, ամենեւին իրատեսական չէր. «Բավական կլինի սուլթանին հասկացնել, գրում է նա, որ չկա փրկության այլ միջոց, քան խաղաղ բարենորոգումները, անկողմնակալ ձեռով արդարություն եւ վերահսկողություն սահմանող կառավարության հաստատումը, որը կհաջորդի ամենագարշելի քմահաճ իշխանությանը եւ

հավասարապես օգտակար կլինի նրա բոլոր հպատակների համար»: Հակառակ դեպքում, ինչպես ենթադրում է Կլեմանտն, կծագի տերությունների զինված ուժերի միջամտության անհրաժեշտությունը:

Համիդյան կոտորածները նշավակող ֆրանսիացի գործիչների թվում Կլեմանտն առաջիններից էր, որը ոչ միայն բողոքի իր խորխտ ձայնն է վեր հանել եւ մինչ այդ՝ արեւմտահայերի կոտորածներին գրեթե անտեղյակ ֆրանսիական ու եվրոպական հասարակայնությանը ներկայացրել Արեւմտյան Հայաստանում տեղի ունեցող անցքերի հավաստի պատկերը, այլեւ, ի տարբերություն այլոց, հայերի ցեղասպանության հարցում դրսևորած անվշտակից վերաբերմունքի համար խստագույնս դատապարտել է իր երկրի պետական քաղաքականությունը:

Բազում տարիներ անց, 1905-1907 եւ 1917 թթ. ռուսական հեղափոխությունների ազդեցության ներքո, Կլեմանտնի հայացքներն էվոլյուցիա կապրեն, նա շեշտակի շրջադարձ կկատարի ձախից աջ՝ մեկընդմիջտ լքելով արմատական դեմոկրատի դիրքերը: Անփոխոխ չի մնա նաեւ նրա դիրքորոշումը հայկական հարցում: Սակայն դա դեռ առջեւում է, իսկ 90-ական թվականներին նա հանդես է գալիս դեռեւս իբրեւ Հայ դատի ջերմեռանդ պաշտպան:

Հարկադրված ենք միայն ցավով նշել, որ Կլեմանտնի քաղաքական գործունեությանն առնչվող այս դրվագը հանիրավի չի արժանացել նրա ֆրանսիացի, ամերիկացի, խորհրդային կենսագիրներից շատերի (Գ. Գեռֆոյ, Ժ. Լոկոնտ, Ժ. Սյուարե, Ու. Ուիլյամս, Դ. Պ. Պրիցկեր) ուշադրությանը:

ՎԱՐՈՒԺԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ,
Պատմական գիտությունների թեկնածու

Ցաւակցական

Այսու մեր խորին վշտակցութիւնն ենք յայտնում «Լոյսի» խմբագրական կազմի անդամ Պրն. Վաչիկ Վարդանեանին և բոլոր պարագաներին իրենց հօր՝ հանգուցեալ Պրն Վարդանի մահուան առիթով:

Խնրագրութիւն

Մատչելի արժեքներով կատարում ենք ձեր բնակարանին կապուած բոլոր տեսակի սպասարկութիւններ (գոյնարարութիւն, շինարարական վերանորոգում, մաքրութիւն եւ այլն):

Հեռախոս՝ 8407508 Վարդանեան

كليه امور خدماتي منزل شما را (نقاشی ساختمان، تعمیرات

بنایی، کفپوش، کاغذ دیواری، نظافت منزل و غیره) با نازلترین

قیمت در اسرع وقت انجام می شود.

تلفن تماس ۸۴۰۷۵۰۸ وارطانیان

Հայոց ցեղասպանության ռազմավարական հետեւանքները

Գրեթե մեկ դար է անցել Մեծ եղեռնից: Սակայն այսօր էլ այդ հրեշավոր հարվածի հետեւանքները կրում են Հայաստանը, հայ ազգը եւ մեզանից յուրաքանչյուրը: Հայաստանի եւ հայության կազդուրումը դեռ շատ երկար ժամանակ է պահանջելու: Ի՞նչ էր ցեղասպանությունը հայ ազգի ապագայի համար, ի՞նչ են նշանակում մեր տված կորուստները, ինչպե՞ս է ցեղասպանությունն անդրադառնում մեր այսօրվա իրականության վրա: Այս հարցերը, որքան էլ զարմանալի է, մեզանում ըստ արժանվույն չեն քննված: Ավելի ճիշտ՝ այս հարցերին մենք տվել ենք հիմնականում հուզական պատասխաններ, թերանալով գնահատել Հայոց ցեղասպանությունն ու նրա հետեւանքները քաղաքական եւ ռազմավարական չափանիշներով:

Համառոտաբար ուրվագծենք ցեղասպանության պատճառած գոհերն ու կորուստները եւ դրանց երկարաժամկետ՝ մինչեւ այսօր զգացնել տվող հետեւանքները:

Կենսատարածքի կորուստ

Մինչեւ 1915 թ. հայ էթնոսի հինգհազարամյա գոյատեւման տարածքն ընդգրկում էր ամբողջ Հայկական լեռնաշխարհը, այսինքն՝ պատմական Հայաստանը: Աշխարհառազմավարական առումով, այս մեծ՝ ավելի քան 350.000 քառ. կմ ունեցող տարածքը նմանվում է մի հսկա բերդի, որն ունի մի շարք պաշտպանական շրջաններ, որոնցից յուրաքանչյուրն ի վիճակի է ինքնուրույն ապահովել իր պաշտպանությունը: Պաշտպանական շրջաններից մեկի կամ մի քանիսի գրավումը օտար զավթիչի կողմից դեռեւս չէր նշանակում Հայաստանի գրավում, քանի որ մեկ ուրիշ շրջանում կամ շրջաններում կենտրոնացած հայկական ուժերը միշտ ի վիճակի էին լինում վերախմբավորվել ու, հարմար առիթը որսալով, հակահարձակման անցնել եւ վերատիրանալ Հայաստանի զավթված տարածքին:

Ավելի ուշ՝ ամենածանր 15-19-րդ դարերում, երբ Հայաստանի պետականությունը կործանվել էր, իսկ հայկական զինված ուժերը հիմնականում ոչնչացվել էին ու վերացվել ասպարեզից (մանր զորամիավորումներ էին պահպանվել միայն առանձին լեռնային շրջաններում), Հայաստան երկրի գոյատեւման գլխավոր առիավատչյան ժողովրդագրական գործոնն էր՝ նրա տարածքում հայկական տարրի մեծամասնություն կազմելը: Երբ մոնղոլական ու թուրքմենական արշավանքների կամ թուրքապարսկական պատերազմների հետեւանքով Հայաստանի որեւէ մաս ավերվում էր (երբեմն գրեթե ամնարդարեակ դառնում), շատ չանցած Հայաստանի մյուս մասերում ապաստանած հայությունը, կարծես մագնիսական ձգողականություն ունենալով հայրենի, պապենական հողի նկատմամբ, դարձյալ վերադառնում էր, միշտ հուսալով, որ հայրենիքը վաղ թե ուշ ձեռք է բերելու ազատություն, անկախություն, տնտեսական եւ ռազմական հզորություն:

Շար. 1

Շուշին ավելին է, քան հաղթանակը

Էզեր ռազմաշահակասայիտ օրագրիկ

Զորի Բալայան

Իննսուներկուսի ամբողջ ապրիլը Ստեփանակերտն անցկացրեց հուղարկավորումներով: Կասկած չկար, որ Շուշին ու Ադրամը ուղիղ կապի մեջ էին իրար հետ: Որովհետեւ հաճախ էին միաժամանակ արձակում «Կրակ» հրամանը, ու այդ ժամանակ «Գրադի» սարքավորումները համազարկ էին արձակում միեւնույն թիրախին՝ Ստեփանակերտին: Եվ ամբողջ ապրիլին անվթար մնացած սենյակներում ու նկուղներում մշակվում էր Շուշիի օպերացիայի պլանը: Բաքվի հեռուստաալիքների հաղորդավարները իզուր էին բռնում գլուխները: Ես կարող եմ որպես փաստաբան հանդես գալ Ադրբեյջանի պաշտպանության նախարարի եւ նրա համախոհների համար, որոնց մեղադրում են իբր դավաճանության մեջ: Մենք ոչ միայն մանրակրկիտորեն նախապատրաստում էինք օպերացիան, մեր առջեւ դնելով գերխնդիր՝ ոչնչացնել չարաղետ կրակակետը: Ես արհամարհելով գրական այնպիսի մեղքը, ինչպիսին է՝ կրկնությունը, չեմ հոգնում ծոցատետրիս մեջ նշելուց՝ «գիտությամբ»:

Գա նշանակում է, որ պետք է անել ամեն ինչ, որպեսզի հաղթանակը ձեռք բերվեր նվազագույն կորուստներով: Գա նշանակում է՝ հարկավոր էր գործնականորեն եւ կրկին գիտականորեն լուծել ե՛ր դաշտային հոսպիտալների, ե՛ր նկուղներում տեղավորված համապատասխան կենտրոնական հոսպիտալի սարքավորումների տարատեղման հարցերը: Ոչ միայն նախապատրաստում էինք օպերացիան, այլեւ անում էինք ամեն ինչ, որ մարդիկ դիմանան դժոխքում: Ես գիշերում էի ոչ թե մորս մոտ, նրա միսենյականոց բնակարանում, այլ՝ Վալերի Մարտիչյանի՝ բանակի բուժառայության պետի առանձնատանը: Նա, ինչպես ես, գիշերները գրառումներ էր կատարում (տարիներ հետո Վալերին գիրք հրատարակեց՝ «Պատերազմի հետքը երկար է մնում») վերնագրով): Եվ ահա, Կոմանդոսի աշխատասենյակում, գեկուցելով դաշտային հոսպիտալի տարատեղման մասին՝ Մղնախ գյուղի մոտ, պատմեց նախորդ օրն իր կատարած մի վիրահատության մասին: Ժամանակակիցների օրագրերը բոլոր ժամանակներում համարվել են տարեգրության յուրօրինակ փաստաթուղթ:

Եվ այստեղ կցանկանայի մեջբերել Վալերիի օրագրից մի հատված, որ անփոփոխ մտցրել եմ իմ գրքի մեջ.

«Արկն ընկել էր տան մուտքը, որտեղ մարդիկ էին պատսպարվել: Չոփվածների մեջ կային մեր աշխատակիցների հարազատներ: Արտասվելու ժամանակ չկար: Բոլոր ուժերը պետք էր համախմբել ողջերին փրկելու համար: Տոկում էինք: Արցունքները կուլ տալիս: Փրկում:»

Ամբողջ երրորդ հարկը, ինչպես նաեւ թերապեւտիկական ու նյարդաբանական բաժինները շարքից դուրս էին եկել: Նկուղում վիրահատարան ու վիրակապարան բացեցինք: Լույս չկար: Ծարժիչը շուտաշուտ շարքից դուրս էր գալիս: Չննումները, վիրակապումները, պատա-

հում էր նույնիսկ վիրահատությունները կատարում էինք մոմի լույսի տակ: Ադրամից Շուշի ու Լաչին տանող գազատարներն անցնում էին Ստեփանակերտի միջով, դրա համար, փառք Աստծո, գազ կար: Մեր հնարամիտները համեմատաբար անհրաժեշտ շարժիչները դարձրել էին գազով աշխատող: Գազով էին աշխատում նույնիսկ շտապ օգնության մեքենաները: Շտապ կարգով վերասարքավորեցինք նախկին կուսակցության մարզկոմի նկուղները, եւ տեղափոխվեցինք այնտեղ: Նոր էինք տեղավորվել, որ ուժգին ռմբակոծություն սկսվեց: Մեր շենքի վրա երկու արկ ընկավ, բայց նկուղը չտուժեց, ու մենք շարունակեցինք աշխատել: Մեկ էլ Մերժ Սարգսյանի վարորդը ձեռքերի վրա մի տասնամյա պատանու բերեց՝ դաստակը պոկված, որովայնը տակնուվրա եղած: Մարմինն ամբողջապես պատառտոված: Լյարդի ծվեններից արյուն է հոսում: Ստամոքսից՝ սննդային զանգված: Տղան անգիտակից վիճակում է: Միայն թույլ տնքում է: Պառկեցրինք վիրահատական սեղանին: Ներփոխարկում կատարեցինք, արյան փոխարինող նյութերի շիբային ներարկում: Որոշեցինք արյան խումբը: Անեսթեզիոլոգները մերոնցից արյուն էին վերցնում փոխներարկման համար: Վարորդը, անունը Մերգեյ էր, պատմում էր, որ տղային վիրավոր վերցրել են Մերժ Սարգսյանն ու նախորդ օրը Ստեփանակերտ ժամանած Վազգեն Սարգսյանը՝ Արմենավանը շրջանցող ճանապարհին: Նրանք դիտարկում էին հակառակորդի դիրքերը, երբ լսեցին պայթյուն եւ տղայի աղեկտուր ճիչը: Վազգենն ու Մերժը տղային ուղարկեցին մեքենայով, իսկ իրենք ոտքով գնացին»:

Ամենաապշեցուցիչն այն էր, որ ոչ միայն ադրբեյջանական տեղեկատվության միջոցներն էին ոռնոց բարձրացրել այնպիսի կրակակետերը վերացնելուց հետո, ինչպիսիք են Խոջալուն եւ Շուշին, այլեւ թուրքականը:

Նրանք դիմում էին ՍԱԿ-ի անվտանգության խորհրդին, եւ Հասագային, եւ Մոսկվային՝ մեղադրելով մեզ ոչ ավել, ոչ պակաս՝ ագրեսիայի մեջ: Թերթերը գրեցին, թե պաշտոնական Թեհրանը խիստ վրոզված է, որ հայերը Շուշին գրավեցին այն օրերին, երբ Հայաստանի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը գտնվում էր Իրանում: Պաշտոնական Ստեփանակերտը ստիպված էր պաշտոնապես պատասխանել պաշտոնական Իրանին, որ խոսքն այստեղ վերաբերում է բացառապես ժամկետների զուգադիպությանը, քանի որ օպերացիայի օրը երկու անգամ հարկադիր փոխվել է վատ եղանակի պատճառով: Նախագահի ազգային անվտանգության գծով խորհրդական Աշոտ Մանուչարյանն ասաց, թե դեռ մինչ օպերացիան, երբ պետությունների բազմաթիվ ղեկավարներ, դիմելով Հայաստանի նախագահին, անհանգստություն էին հայտնում Շուշիի կրակակետի վերացման առիթով, Տեր-Պետրոսյանը նկատեց, որ «Շուշին չի կարելի գրավել», որին Ռոբերտ Քոչարյանը պատասխանեց. «Արտահայտությունը ճիշտ է կառուցված, բայց կարիք է գգում մի փոքր ճշգրտման: Շուշին չի կարելի չգրավել»:

ԵՐԵՔ ՍԵՐՈՒՆԴ, ԵՐԵՔ ՏԵՍԱԿ ՄՏԱՃԵՐԱԿԵՐՊ ՄԻ ԵՐԿՐՈՒՄ

Լեռն Անարոնեան

Ժողովուրդների պատմությունը լի է փոփոխություններով՝ յեղաշրջումներ, յեղափոխություններ, բռնապետություններ ու գաղութացում, որոնք ազդերի եւ երկրների իրավիճակը բարեփոխման են ենթարկել կամ դրանց բոլորովին դեպի հալածման ուղի են տարել:

Հայաստանում 20-երորդ դարաշրջանի անց ու դարձերը, Հայ ժողովրդի ողջ պատմության մէջ աննախադէպ են եղել:

Դարասկզբին տեղի ունեցած Մեծ Եղեռնը ամենամեծ հարածն էր հայ ժողովրդին: Դարեր ի վեր անիշխանությունից յետոյ, 1918 թականին ստեղծեց Հայաստանի առաջին ազատ եւ անկախ հանրապետությունը, որից երկու տարի անց Հայաստանը միացաւ Խորհրդային Միութեանը: Իսկ դարավերջում 70-ամեայ Խորհրդային Միութեան փլուզման հետեւանքով հռչակեց ազատ եւ անկախ Հայաստանի երրորդ Հանրապետությունը:

Եօթանասուն տարի Հայաստանը անդամակցում էր Խորհրդային Միութեանը, որը ղեկավարում էր կոմունիստական գաղափարախօսութեամբ, եւ որի մէջ մտած 15 հանրապետություններում սերունդները նոյնանման քաղաքականութեամբ ու մեթոդներով էին դաստիարակում: Բացառիկ էին հին, արմատաւոր ու կրօնական հաւատքի տէր ժողովուրդները, որոնք կարողացան իրենց մշակոյթը, կրօնն ու գրականությունը պահպանել ու զարգացնել: Շատ հանրապետություններ ընդունեցին ռուսերէն գրերն ու լեզուն եւ մոռացան իրենց կրօնական հաւատքը:

Ընդհանուր առմամբ միատեսակ գաղափարական դաստիարակությունը եւ սերունդների միակերպ ուսումնադաստիարակչական ծրագրերը, համայն Խորհրդային Միութեան եւ արեւելեան Եւրոպայի կոմունիստական երկրների ժողովուրդների մտածելակերպն ու հոգեբանությունը քիչ ու շատ մօտեցրել էին միմեանց:

Խորհրդային Միութեան փլուզումից յետոյ, ծընունդ առան 15 հանրապետություններ: Յեղափոխություն տեղի չէր ունեցել, որով երկրների պետական կարգերը վեր ու վայր լինէին: Հէյդար Ալիեւը, Խորհրդային Միութեան կոմունիստական կուսակցութեան բարձրագոյն պաշտօնեաներից, պարտքիւրոյի անդամ, նաեւ Խորհրդային Միութեան ընդհանուր քարտուղարի պաշտօնի թեկնածուն, կարճ ժամանակաշրջանում դառնում է կապիտալիստական Ադրբեջանի նախագահ: Նոյնն է կատարում եւ Վրաստանում, որտեղ հօգր եւ գերութ Խորհրդային Միութեան արտաքին գործոց նախարար՝ Էդարդ Շեւարդնաձէն նախագահում է կապիտալիստական երկիրը: Նոյնն է տեղի ունենում Ուկրաինայում, Բելառուսիայում, Թուրքմենիստանում, Ղազախստանում, Կիրկիզստանում, Ուզբեկստանում եւ ուրիշ նորանկախ հանրապետություններում: Բայց Հայաստանի պարագան այլ էր եւ այդ փոփոխությունը իրովի կատարեց: Մի խումբ երիտասարդ մտատրական, ժողովրդին անծանօթ դարաբաղեան պայքարի անան տակ, շահելով նրա սէրն ու հաւատքը, ձեռք բերեցին Հայաստանի Հանրապետութեան իշխանութեան ղեկը եւ մինչ այժմ էլ շարունակում են պահել այն:

Հայաստանում նոյնպէս պետական կառոյցները եւ երկրի կառավարման կարգերը չփոխեցին, սակայն պետական, կառավարական եւ հասարակական ոլորտներում տարիքի և մտային պառակտում առաջացաւ սերունդների մէջ, որն այս յօլաձի քննարկման թեման է:

Խորհրդային Միությունը ղեկավարում էր կոմունիստական կուսակցութեան միջոցով: Իւրաքանչիւր հանրապետություն ունէր իր գերագոյն խորհուրդը, կառավարությունն ու նախագահն, որոնք նշանակում էին կենտրոնի՝ Մոսկւայի կողմից: Այդ շրջանի պետական աշխատակազմի միջին տարիքը 45-ից 60-ի շուրջ էր: Նրանք յատուկ կրթած եւ դաստիարակած էին կոմունիստական կուսակցութեան ծրագրերն ու քաղաքականությունը իրագործելու համար եւ նրանց մտքերն ու գաղափարները շատ հեռու էին կապիտալիստական համակարգերից, որում հարստությունը պատկանում է ժողովրդին եւ երկիրը կառուցում ու բարգաւաճում է մարդկանց աշխատանքի հատոյթից, ստացող տուրքերից եւ երկրի բնական հարստութեան շահերից, որոնք իշխանությունների միջոցով եւ նրանց բիւջետային ծրագրերով, երկրի պահանջներն են բաւարարում:

Կոմունիստական հասարակարգում երկրի ողջ հարստությունը պատկանում էր պետութեանը. սեփականությունը բացակայում էր ժողովրդի կեանքից ու հասկացողությունից: Նրանք իրենց ուզածը պիտի որբէ՛լ այլ կերպ կառավարությունից ստանալին: Երկրի բիւջէն կազմում էր ըստ հասարակական, քաղաքական ու ռազմավարական պահանջների, եւ վաւերացման համար ներկայացում էր կենտրոնին: Այս բացատրութեամբ պարզ է դառնում երկու տարբեր հասարակակարգերի եւ նրանց ղեկավարների չափազանց տարբեր մետոդներն ու մտածելակերպը, որոնցից ամէն մէկն իրեն զարգացնում է պահանջների բերումով եւ երկրի ծրագրերի գործադրման ճամբին:

Մի հետաքրքիր մեջբերում կատարեմ «Կեանքի դասեր» գրքից, որը աշխարհահռչակ ակադեմիկոս Ֆադեյ Սարգսեանի կենսագրութիւնն է: Նա պատմում է, թէ իր վարչապետութեան ժամանակ ինչպէս կարողացան Երեւանի մետրոյի կառուցման իրատունքը կենտրոնից ստանալ: Նա և հանգուցեալ Կարէն Դեմիրճեանը միասին մեկնում են Մոսկա եւ դիմում կուսակցութեան պատասխանատու եւ որոշող անձին: Այն տարիներին Երեւանի բնակ-չութիւնը 700,000 էր, եւ օրէնքը պայմանաւորել էր մէկ միլիոն բնակչութեամբ: Նախնական բանակ-ցութիւնն ապարդիւն է անցնում: Կարէն Դեմիրճեանը, որն այն ժամանակ Հայաստանի կոմունիստական կուսակցութեան առաջին քարտու-դարն էր, խիստ բարկանում և վրդովում է: Ռուս պատասխանատուն դա զգում է եւ ասում թէ ես նոր յիշեցի, որ Երեւան քաղաքում շատ բլուրներ կան եւ դուք ուզում էք տրամաւայի գիծ սարքելու համար տունեւեւներ փորել, շատ բարի, եւ ընդունում է մետրոյի կառուցումը՝ այդ անուան տակ:

Իսկ այսօր, ազատ եւ անկախ Հայաստանում, իշխանութիւնները առանց բուջէտ ապահովելու, որեւէ շինարարական աշխատանք չեն կարող իրա-գործել, եւ այդ բիւջէտը պիտի գոյանայ երկրի բնական հարստութիւնից ու նաեւ ստացող հարկերից:

Ներկայ Հայաստանի ղեկավարների կազմում մնացել են 55-70 տարիք ունեցող անձնաւորութիւններ: Սոյն սերունդը Խորհրդային Միութեան շրջանում, տնտեսական եւ քաղաքական բնագաւառներում արտաքին յարաբերութիւն չի ունեցել, քանի որ դա կենտրոնի մենաշնորհն էր: Այդ սերունդը, որ մեծ մասամբ բացի հայերէնից եւ ռուսերէնից ուրիշ լեզուներ չգիտի, հասել է հանգստի կոչման տարիքի եւ շուտով հեռանալու է Հայաստանի քաղաքական, տնտեսական ու գիտական ասպարէզներից:

Երկրորդ սերունդը, Հայաստանի Հանրապետութեան անկախութեան հռչակման ժամանակ 20-25 տարեկան էր եւ նոր էր ուզում մուտք գործել կեանքի ասպարէզ: Այդ սերունդի գաղափարներն ու հոգեբանութիւնը ձեւաւորել էր Խորհրդային Միութեան ծառայելու համար: Նրանց դպրոցները, համալսարանները եւ ընդհանրապէս միջավայրը կոմունիստական կուսակցութեան ծրագրերով ու հսկողութեան տակ է եղել: Դրանցից ոմանք ստացել էին կրթութիւն, որպէսզի գրաւէին ասպազայ կուսակցական բարձր պաշտօնները, եւ կոչում էին «Կամստոյներ»:

Հայաստանի 1991 թականի անկախութիւնն այդ սերունդի համար մի ահաւոր հարած էր: Նրանք միանգամայն կորցրեցին իրենց ինքնավստահութիւնը, յոյսն ու հաւատը եւ ականատեսն եղան իշխանութեան գաղափարական հիմնովի փոփոխ-մանը: Նրանք մասամբ պաշտօնավարման անցան պետական հիմնարկներում, որոշները ցրաւեցին մասնաւոր առեւտրական կամ արդիւնաբերական բաժիններում եւ որոշներն էլ լքեցին Հայաստանը դէպի Ռուսաստան, Միացեալ Նահանգներ եւ եւրոպական երկրներ: Այդ սերունդը շատ աւելի ճկուն էր, քան իրենից նախորդը: Այսօրայ Հայաստանը ղեկավարում է նրանց, կամ նրանցից մի քանի տարի աւելի տարեցների միջոցով: Սոյն սերունդը ազդել է իր նախորդներից, եւ միւս կողմից զգում է իրենից երիտասարդ սերունդի աճն, որը իր նման չի դաստիարակել:

Երրորդ սերունդն նրանք են պատկանողում, որ ՀՀ հռչակման ժամանակ 10-15 տարեկան մանուկ-պատանիներ էին: Այս սերունդի դաստիարակչական, կրթական, մարզական եւ հասարակական յարաբերութիւնները բոլորովին տարբեր է նախկին երկու սերունդներից: Փոխել են ընտանեկան զրոյցները, հեռուստատեսութեան հաղորդումները, դպրոցական դասերը, մամուլում գրած յօդածները եւ վերացել են բոլոր այն գործօնները, որոնք նախկինում միայն կուսակցութեան ցանկութիւններն էին երէխաների ուղեղում:

Այս սերունդը, վերջին տաս տարիների ընթաց-քում, դաստիարակչական շատ տարբեր մթնոլոր-տում է ուսում ու կրթութիւն ստացել՝ համեմատելով իրենց ծնողներին, եւ այսպիսով աճել ու դաստիարակել է տարբեր գաղափարախօսութեամբ: Նոր սերունդը արդէն աստիճանաբար աշխատանքային ասպարէզ է մտնում եւ այլեւս չի ազդում աւագ սերունդի մտածելակերպից, քանի որ նրա գաղափարախօսութիւնը արդէն փայլը ձեռքից տւել, եւ կորցրել է իր ազդեցութիւնը: Ուստի Հայաստանի ժողովրդի միատարր մտածելակերպին հասնելու համար, առնուազն 30 տարի է պէտք, որի ընթացքում Հայաստանի ժողովուրդը եւ իշխանութիւնները միահամուռ ու միաձոյլ աշխատանքներով, կը վերացնեն տարիների ժանգոտած հոգեմտաւոր պառակտումները՝ այս երեք տարբեր սերունդների մէջ:

Շահառու ակնարկ իրանահայ գաղթօջախների պատմության

Էդ. Բաղդասարյան-Գերմանիկ

1336 թ. գրված ձեռագիր հիշատակարաններից երեւում է, որ Թավրիզը Ատրպատականի հայ լուսավորչական թեմի առաջնորդական կենտրոն է եղել (Եպիսկոպոսներ Ջաքարիա եւ Տերտեր): Թավրիզի քրիստոնյա բնակչության վիճակը, մոնղոլական տիրապետության շրջանում, այնքան էլ գովական չի եղել:

14-15-րդ դարերում իրանահայ խոշոր գաղթօջախ է հաստատված Սուլթանիեում, որը հիմնվել է Էլխան Արղունի (1284-1291) կողմից Ձենջանի եւ Ղազվինի միջև: 14-րդ դարի սկզբներին Էլխանության մայրաքաղաքը Թավրիզից տեղափոխվեց այդ քաղաքը: Սուլթանիսեն եւս, Թավրիզից անկախ ունեցել է իր հայկական թեմը՝ թեմական առաջնորդներով:

Սուլթանիեի հայ բնակչության մի մասը, հավանական է, եկել է Անիից: Այդ մասին է վկայում 1326 թ. Կարապետ գրչի հիշատակարանը: Սուլթանիեն միջազգային առեւտրում իր խոշոր դիրքը պահպանեց մինչեւ Էլխանության անկումը՝ 1385 թվականը: 14-15-րդ դդ. հայկական մեծ թվով բնակչություն է ունեցել նաեւ Խոյ քաղաքը: Իսպանիայի ճանապարհորդ Կլավիտոն, որը 1405 թ. եղել է Խոյում, իր ուշագրության մեջ հայտնում է, որ այդ քաղաքի «բնակչության մեծ մասը հայ ցեղից են»: Նա նույնպես հիշատակում է Մակուի հայկական խոշոր գաղթօջախի մասին: Նա հայտնում է, որ 1405 թ. գիշերել է Մակուի բերդում, որի իշխանը, ինչպես բերդը պաշտպանող զինվորները, կաթոլիկ հայեր են եղել: Հայ գաղթափայր է հանդիսացել Մարաղան: Այստեղ գրվել են հայերեն ձեռագրեր եւ պարսկերենով թարգմանվել աշխատություններ:

Սկզբնաղբյուրներում ստվարաթիվ հայ բնակչություն գոյության մասին հիշատակություններ կան նաեւ Սարմաստ քաղաքում եւ նրա շրջակա գյուղերում, նաեւ Ռեշտում: Այստեղ 1494 թ. գոյություն է ունեցել «Հակոբ հայրապետի» անունով հայոց եկեղեցի: Բավականին խոշոր հայկական գաղթօջախ գտնվել է Ուրմիայում, որի հայ բնակչությունը հիմնովին տուժել է 1425 թ. Իսկենդերի վայրագությունների հետեւանքով:

Հայ ազգաբնակչության գերեվարումը շարունակվում է նաեւ Լենկ Թեմուրի ասպատակումների ընթացքում (1386, 1387, 1395, 1396, 1399), որոնց զգալի մասը տարվում է Խորասան:

Լենկ Թեմուրից հետո Հայաստանում եւ պարսկահայ գաղթօջախներում շարունակվում են անընդմեջ ասպատակությունները Ղարա Յուսուֆի (1388/9-1405), Իսկանդարի (1420-1437), Ջեւանշահի (1444-1466) եւ ուրիշների ժամանակ:

Սեֆյան հարետության հիմնադիր շահ Իսմայիլի գահակալության շրջանում է հիմնվել Սպահանի հայ գաղթավայրը: Սխալ է այն կարծիքը, որ իբրեւ թե Սպահանի հայ գաղթօջախը ստեղծվել է Շահ Աբբասի բռնագաղթի շնորհիվ:

Շահ Աբբասի բռնագաղթից առաջ Սպահանում հայ համայնքի գոյության մասին են խոսում Առաքել Ղավրիժեցին, Հարություն Տեր-Հովհանյանը, Գրիգոր Աղաբաբյանը: 16-րդ դարի եվրոպեցի ճանապարհորդները իրենց ուղեգրությունների մեջ բազմա-բընույթ տեղեկություններ են հաղորդում Սպահանում բնակության հաստատած հայ առեւտրականների եւ արհեստավորների աշխույժ գործունեության մասին:

Ուշագրավ է այն, որ Սեֆյան հարստության հիմնադիր Իսմայիլը, փոքր հասակում, ապաստանել է Աղթամար եւ իր դաստիարակությունը ստացել այնտեղ, չնայած հետագայում նրա որդին՝ շահ Թահմասը, երախտամոռ գտնվեց հայերի նկատմամբ:

1514 թ. օգոստոսի 21-ին Չալդրանում սուլթան Սելիմի եւ շահ Իսմայիլի բանակների միջև տեղի ունեցող կռվի ժամանակ, երբ պարսիկները պարտություն կրեցին, թուրքական զորքերը առաջանալով մտան Թավրիզ եւ այստեղից գերի տարան 3000 հայ արհեստավորների իրենց ընտանիքներով:

1603 թվականին պարսկական զորքը, Շահ Աբբասի գլխավորությամբ անցնում է Արաքսը եւ մտնում Ջուղա: Պարսկական բանակը գրավում է Նախիջևանը եւ պաշարում Երեւանը, ուր ամրացրել էր թուրքական կայազորը: Այդ ընթացքում պարսկական մի այլ զորամաս անցնում է թուրքական սահմանը, Կարինի ուղղությամբ, ասպատակում Վանի, Մանազկերտի, Ալաշկերտի, Կարինի, Բասենի, Խնուսի գավառները: Արեւմտյան Հայաստանից 60 հազար հայ գաղթականներ են բերվում Իրան:

Երեւանը գրավելուց հետո, Շահ Աբբասը տեղեկանալով զորաբանակի առաջխաղացման մասին, Սինան վաշայի հրամանատարությամբ, որոշում է իրագործել իր ծրագիրը՝ հայերին բռնի գաղթեցնել Իրան: Այդ քայլը Շահ Աբբասը օգտակար էր համարում երկու տեսակետից. նախ՝ ամայի ընդարձակ տարածություն կստեղծեր արշավող թուրքական բանակի առջև ու դրանով կոժվարանար նրա պերենավորումը, եւ ապա՝ հայ գաղթա-կանությունը Իրան տեղափոխելով նպաստած կլիներ իր երկրի տնտեսական կյանքի զարգացմանը:

Իրան տարվող բազմահազար հայ բնակչության զգալի մասը ոչնչանում է:

Բռնագաղթած հայ բնակչությունը իր գաղթի տարբեր փուլերի ընթացքում հաստատվում է Իրանի զանազան շրջաններում՝ Քաշանում, Ղազվինում, Գիլանում, Էնզելիում, Սպահան քաղաքի գավառներում՝ Լնջանում, Ալինջանում, Գանդիմանում եւ Ջղախոռ, Փերիա ու Բուրվարի, Քյազագ, Քյամարա, Գափլա եւ Ղարաղան, Շիրազ, Չարմահալ, Մագա-նդարան, Համադան եւ այլն:

Եւրոպացի ճանապարհորդներից մեկը՝ Գռուվեն, Հայաստանից Իրան տարված բնակչության թիվը 60.000 ընտանիք է հաշվում: Եթե յուրաքանչյուր ընտանիքում հաշվենք 5 անձ, ապա գերեվարված հայ բնակչության թիվը 300.000-ի է հասնում: Կան տեսակետներ 70.000 ընտանիքի մասին: Ըստ եւրոպացի ճանապարհորդի՝ քված գաղթականներից միայն ստրկության վաճառվածների թիվը 100.000 է եղել:

Անրի Վերնոյ (1920-2002)

Դոկտ. Գուշանգ Քաուսի
Թարգմ. Գագիկ Անդրեասեանը
(«Ֆիլմ» համար 283 ամսաթերթից)

Շրժեշտ Աշտ Մալաքեանին

Աշտ Մալաքեանը հենց նոյն Ֆրանսիացի հայ ազգի ծագում ունեցող Անրի Վերնոյ հանրայայտ կինոռեժիսորն է, որի Ֆիլմերին ակամատես ենք եղել անցեալում եւ այսօր: Նա ծնել է 1920 թականին հայ ազգի ծագում ունեցող մի բարեկեցիկ ընտանիքում, եւ երբ 2002 թականի սկզբնական օրերին կնքեց իր մահկանացուն դեռ չէր բոլորել իր կեանքի 82 տարին: Նա 4 տարեկանում իր հօր՝ Յակոբի, մօր՝ Արաքսի եւ իր երկու մօրաքոյր-ներ՝ Աննայի եւ Գայեանէի ընկերակցութեամբ քեցին Թուրքիան, (Թուրքիան նախքան առաջին համաշխարհային պատերազմն Օսմանեան կայսրութիւն էր կոչուած) եւ ապաստան գտան Ֆրանսիայի Մարսէլ քաղաքում, որը մի ապաստարան էր ցեղասպանութիւնից մազապործ խոյս տուած հայերի համար: Օսմանական կայսրութիւնը հարիւրամեակներ տիրապետելով Կոստանդնուպոլսին ու Անատոլիայի թերակղզուն, բազմաթիւ ոճրագործութիւններ ու մարդասպանութիւններ էր գործադրել, որոնցից ամենաահաւորը 1915 թականի ապրիլի 24-ի Հայոց Ցեղասպանութիւնն էր, որը տեղի ունեցաւ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին եւ որով մէկ ու կէս միլիոն հայեր՝ մանկահասակ ու ծեր «Երիտթուրքերի» պաշտօնեաների հրամանով, որոնք Օսմանական արիւնարբու սուլթանների տեղին էին գրաւել, մի նախատեսուած ծրագրով տեղահան եղան եւ նահատակեցին:

Ինչպէս Աշտ Մալաքեանն է գրում իր կենսագրականում՝ «Մայրիկ» գրքում, շատ դժար ու մութ օրեր են անցկացրել այդ օտար երկրում: Նրա հայրը, որ Թուրքիա-այում ձկնորսութեան նաւակի պատրաստման մի արհեստանոց ուներ, գիշերային մի գործ ստանձնեց Մարսէլ քաղաքի գործարանում եւ մայրն ու իր երկու մօրաքոյրներն էլ տղամարդու շապիկ կարելու պատուէրներ ընդունեցին տնում, որպէսզի կարողութիւն ունենային փոքրիկ Աշտի կեանքի եւ դպրոցի ծախսերը հոգալ:

Աշտ Մալաքեան, թէ Անրի Վերնոյ

Ամերիկայի գօրեղ կինոռեժիսոր Ռուբէն Մամուլեանը, որ Վրաստանի հայ ազգի ծագում ունեցող

ընտանիքից էր եւ իր ընտանիքով 8 տարեկան հասակում Փարիզի ու Լոնդոն մեկնելու մտադրութեամբ լքել էր Թիֆլիսը (իհարկէ ոչ թէ փախուստով, որովհետեւ Վրաստանը ոչ մի առնչութիւն չուներ Օսմանեան



կայսրութեան հետ) եւ Նիւ Եօրքի Բրադվելում եւ ապա Հոլանդիայում, թէ թատրոնում եւ թէ կինոյում ուշագրաւ գործեր էր կատարել, երբ Իրանի հրաւերով 1974 թականի հոկտեմբերին Թեհրան ժամանեց եւ ես, որ նրա հիւրընկալն ու թարգմանիչն էի իրեն հարց տուցի, թէ ինչո՞ւ դուք էլ շատ ուրիշների նման ամերիկեան անուն չընտրեցիք ձեզ համար, օրինակի համար՝ պարոն Մալաքեանը, Վերնոյ դարձաւ, հանգուցեալն ասաց թէ՝ ես յանդիմանեցի նրան այս խնդրում եւ Մալաքեանի պատասխանը այն եղաւ, թէ՝ ես մի յօլած էի գրել Ֆրանսիական մի պարբերականի համար, հայերի ցեղասպանութեան վերաբերեալ եւ երբ յօլածը տպագրուեց, նկատեցի, որ այն «Անրի Վերնոյ» ստորագրութիւնն է կրում, ու երբ պատճառը հարցրեցի, պարբերականի գլխաւոր խմբագիրն ասաց.- «Եթէ յօլածը որեւէ մի հայ հեղինակի անամբ լինէր՝ ատելի քիչ ազդեցութիւն կը թողներ ընթերցողի վրայ, եւ մենք այս Ֆրանսիական անունը ընտրեցինք, որովհետեւ ատելի լաւ ազդեցութիւն ուներ եւ դրանից յետոյ ես այս անամբ ճանաչեցի, թէ չէ անունս Աշտ Մալաքեան է եւ հպարտ եմ այս անամբ»:

Մալաքեան-Վերնոյի Ֆիլմերը՝

«Թշուառականների սփռոցը» (1951, փոխառութիւն Մարսել Էմմի վէպից), «Արգիլած պտուղ» (1952, փոխառութիւն Ժորժ Սիմենոնի «Նամակ իմ դատաւորին» վէպից), «Վէարեգի հացթուխը» (1953, «Կարնաւալ» (1953, Մարսել Փանիոլի կինօսցենարի հիման վրայ), «Մարդ արարածի համար մէկ թշնամին» (1954, ըստ նախկին որոշման այս Ֆիլմի կինոռեժիսորը պէտք է լինէր Ժուլ Դասենը), «Հինգ ոտանոց ոչխարը» (1954, շահել է ոչ ամերիկեան Ֆիլմերի, լաւագոյն Ֆիլմի «Օսկար» շքանշանը), «Թաճ գետի սիրահարածները» (1955), «Ոչ կարեւոր մարդիկ» (1955, շահել է Ֆրանսիայի «Պոպուլիստ» կնոյի մրցանակը), «Փարիզի Փալաս հիւրանոցը» (1956, այս Ֆիլմը 1959թ. Թեհրանում ցուցադրուեց իր

դերասան՝ Ֆրանսուազ Արնոլի ներկայությամբ), «Մի նախագիծ եւ մի գեղեցկադէմ» (1957, փոխառութիւն ամերիկացի գրող Ջէյմս Հայիչէյսի), «Մաքսիմ» (1958), «Մեծ տնօրէն» (1959, փոխառութիւն Իրլանդիացի գրող՝ Օ Հենրիի), «Կովը եւ բանդարկեանը» (1959, Ֆրանսիայի կինոյի լաւագոյն Ֆիլմերից), «Ֆրանսիացի տիկինը եւ տէրը» (1960, մի մաս է էպիգոտիկ Ֆիլմի), «Մի գիշերայ պատահարը» (1960), «Հանրապետութեան նախագահ» (1961 ժողով Միմենոնի վէպից), «Առիւծները ազատել են» (1961), «Մի կապիկ ձմռան» (1962), «Ստորգետնեայ մեղեդի» (1963, շահել է Ֆրանսիական եւ ամերիկեան տարբեր մրցանակներ), «Հարիւր հազար դուրս արեալ» (1964), «Շաբաթայ աւարտի արձակուրդը Չուիքուրում» (1965), «25-րդ ժամը» (1967), «Ման Սերաստիայի պատե-րագմը» (1968), «Միսիցիների խումբը» (1969, այս Ֆիլմը Թեհրանում ցուցադրեց իր իսկական դերակատար՝ Ալէն Գլոնի ներկայությամբ), «Գողութիւն» (1971), «Իժ» (1973), «Վախ քաղաքի վրայ» (1974), «Իմ թշնամու դիակը» (1976), «Ի... որպէս Իքար» (1979, ազատ նայ-ւածք Չան Քենեդու ահաբեկման զեկոյցի), «Հազար միլիարդ դուրս» (1982) եւ «Մնապարծները» (1984):

1985-ին Վերնոյը հրաժարու է կինօնեժիտութիւնից եւ սկսում է իր կենսագրականը՝ «Մայրիկ» գիրքը գրի առնել, որի հրատարումից երկու շաբաթ անց վաճառու է երկու հարիւր հազար օրինակ: Այս գիրքը թարգմանել է տաս լեզուների (որոշ աղբիւրներում շեշտել է, թէ թարգմանել է տասնութ լեզուների) եւ որի տասնեակ-երորդ թարգմանութիւնը եղել է պարսկերէնով¹: Այս յա-ջողութիւնից յետոյ, փոխառութեամբ հէնց իր հրատարակած գրքի, նա ձեռնամուխ է լինում մի Ֆիլմի նախա-պատրաստութեանը, որը բաղկացած էր երկու մասերից՝ «Մայրիկ» եւ «Պարադի պողոտայի համար 588»-ը անուններով: Նա վերջապէս 1992-ին շահում է Ֆրանսիայի ակադեմիայի մեծ մրցանակը՝ իր ամբողջ գործու-նէութեան համար, իսկ 1996-ին ստանում է Ֆրանսիայի «Սեզար» մրցանակը, որը համահասարակ է Ամերիկայի «Օսկար»-ին:

Հետեւեալ հանրայայտ դերասանները համագործակցել են Անրի Վերնոյի Ֆիլմերում. Ներմանդել, Ժան Գարոն, Շարլ Բուայէ, Ժանպոլ Բելմոնդ, Անթոնի Բուին, Մայքըլ Ռեդգրի, Չարլզ Բրանսոն, Ալէն Գլոն, Լինօ Վենուուրա, Օմար Շարիֆ, Իւ Մոնտան, Իւլ Բրէյնըր, Հենրի Ֆանդա, Ֆիլիպ Նարե, Դրեկ Բոգարո, Ժանկլոդ Բերեալի, Դանիէլ Շլեն, Թրէլտր Հաւարդ, Ֆրանսուազ Արնոլ, Միշել Մորգան, Արլետի, Վրինա Լիզի, Դանիէլ Դարիս, Կլոդիա Կարդինալէ եւ շատ ուրիշներ:

«Մայրիկ» եւ «Պարադի պողոտայի համար 588» Ֆիլմերում հօր՝ Յակոբ Չաբարեանի դերում հանդէս է եկել Օմար Շարիֆը եւ Աշոտի դերը (Ֆիլմում «Ազատ») 7, 12, 20 եւ 45 տարեկան հասակներում հերթականութեամբ կատարել են Սեդրիկ Դոսէի,

Թոմփօ Սենի, Ստեֆան Սերկէի եւ Բիշար Բարիի միջոցով: Մօր դերը Կլոդիա Կարդինալէին էր յանձնաւ, իսկ երկու մօրաքոյրներ՝ Աննա եւ Գայեանէի դերերը հերթականութեամբ իրակա-նացրել են Իզաբել Սադռեանը (Ֆրանսիայի թատրոնի հայ ազգի դերասան) եւ Նատալի Ռոսելը: Չաբարեան ընտանիքի ընկեր՝ Աբգարի դերը նախապէս որոշուած էր յայտնի երգիչ Շարլ Ազնաւուրը ստանձնէր, սակայն նրա բազում աշխատանքները արգելք հանդիսացան եւ Էնտեր Ներսիսեանը ներկայացրեց Աբգարի դերը: Ֆրանսիայի հայ բնակիչներն էլ մեծ պատով կատարեցին Ֆիլմի սկզբում պատկերուած ապաստանեալ ժողովրդի դերը: Եպիսկոպոսի դերը ստանձնել էր հէնց ինքը՝ Վերնոյը: Պարտադրական զաղթի տեսարանները նկարահանել են Թումիսիայի անապատներում, իսկ միւս տեսարանները՝ Շուեցարիայի եւ Ֆրանսիայի Ֆիլմարեստի ստուդիաներում: Երկու Ֆիլմերի ցուցադրման ժամանակը 135 րոպէ է, եւ պատրաստողներն են՝ մի արաբ երիտասարդ՝ Թարեդերն Ամմար անունով, Իտալիան, Ֆրանսիայի հեռուստացոյցը (առաջին կայան եւ Փոլոս կայանը), ինքը Վերնոյը եւ մի Ֆրանսիական հաստատութիւն: Երկու Ֆիլմերի ծախսը եղել է 140 միլիոն Ֆրանսիական Ֆրանկ (25 միլիոն ամերիկեան դոլար):

Ֆիլմի նախաբանում հայկական մշակոյթին առնչող երաժշտութեան հետ զուգընթաց ցուցադրում է հին ժամանակաշրջանի ուրարտական շրջանի եւ նրանց ցեղակից-ների, որոնք հայերի նախնիքներն են եղել կեանքին եւ պատմութեան վերաբերող պատկերներ: Ֆիլմի ցուցադրութեան ամբողջ ընթացքում որպէս «յետդարձ» լսում է այդ երաժշտութեան մեղեդին: Միւս սեկանսը սկսում է 1920 թականի մարտի 25-ի առաւօտեան, Բեռլինում Թալիաթ Փաշա Թուրքիայի ներքին գործոց նախարար եւ 1915 թականի ապրիլի 24-ի ցեղասպանութեան ամենագլխատուր հրամանատարի ահաբեկմամբ՝ Սողոմոն Թեհլիրեանի միջոցով: Թալիաթ Փաշան մեծ գումար գողանալուց յետոյ, վրիժառութեան վախից փախչել եւ կեղծանունով ապրում էր Բեռլինում, որպէս մի անձանօթ դէմք: Ահաբեկիչը իրեն յանձնում է ոստիկանութեանը, ապա դատարանում ականատեսների ու ցեղասպանութիւնից վերապարձների արտայայտութիւնների եւ յատկապէս Օսմանեան պետութեան մայրաքաղաքում մեծ ոճիրի ընթացքին Գերմանիայի դեսպանի վկայութիւնների բերումով արդարացում եւ ազատ է արձակում: Մի ուրիշ սեկանսում տեսնում ենք Չաբարեան ընտանիքին եւ եօթ տարեկան Ազատին (Աշոտին), որ մի խումբ ուրիշ հայ զաղթականների հետ միասին իջնում են Մարսէլի նաւահանգիստը եւ այնտեղ թերթի միջոցով տեղեկանում Թեհլիրեանի արդարացման ու ազատ արձակման լուրի մասին եւ ուրախութիւն անում:

Գրքի մէջ գրի առնածը եւ նկարահանուած Ֆիլմը ունեն ինչ-որ տարբերութիւններ, որովհետեւ Մալաքեանի ընտանիքը, երբ Ֆրանսիա ապաստանեցին, Աշոտը չորս տարեկան էր, սակայն Ֆիլմում եօթ տարեկան է: Գրքում ժամանակի մէջ մի յետդարձ

¹ Այս թարգմանութիւնը պատկանում է դոկտ. Հուշանգ Բաւուսիին:

(Ֆլաշբաթ) կատարելով, առաջին բաժինն սկսում է մօր՝ մահով եւ այս ժամանակային յետդարձը, նոյնիսկ ժամանակը ժամանակի մէջ, ընդգրկում է գրքի բոլոր բաժինները: Գրքի նկարագրման ձեւը խիստ գեղեցիկ ու ազդեցիկ է ըստ «Դոբեր Լաֆոն-Փարիզ» հրատարակչութեան տնօրէնի՝ «Երբ կարդացում է այս յուզիչ պատմածքի վերջին տողերը, հասկանում ենք, թէ ինչպէս մի վաղեմի կինօռեթիստը իր տեղը զիջել է մի գօրեղ հեղինակի՝ Անրի Վերնոյ անունով»: Վերնոյը գրքի նկարագրման մէջ նկատի է առել Ֆիլմի դեկոպաժի մեծ մասամբ յատկութիւնները, այնպէս որ ընթերցողը տեղը տալիս է դիտողին: Եւ երեսն են գալիս խոշոր, միջին ու հեռու տեսարաններ, ապարտի շարժում, պարբերական մոնտաժ եւ այլն: Գրքի 31-րդ բաժնում ուսուցչուհին պատմում է Ժամ-դարկի ապստամբութեան իրադարձութիւնը եւ Աշոտն իր մտքում անընդհատ «մոնտաժ» է անում իր ըմբռնումը ուսուցչուհու կանացի անհատակա-նութիւնից, այն հերոս աղջկայ իրադարձութեան հետ՝ այնպէս, ինչպէս որ ուսուցչուհին է ասում:

Վերնոյի գրական ձեւին ծանօթանալու համար անհրաժեշտ ենք համարում մի փոքր հատում բերել նրա գրքից: Յեղասպանութիւնից փրկւած հաշմանդան երի-տասարդների մասին, որոնք մահանում էին օտարութեան մէջ, Վերնոյը այսպէս է ակնարկում. «Մանկութիւն՝ մեծանալու անհոգ ցանկութեամբ, պատանեկութիւն՝ աճող ձգտումներով, որոնք կեղեքում են քեզ ու մի երեկոյ առաջնորդում սիրելիներիդ հոգեվարքին, որոնց ծեր-նալը չես նկատել, մինչդեռ նրանց ամէն մի սպիտակած մազը կանխագուշակում է մի գարունքի գերեզման»: («Մայրիկ գրքի հայերէն թարգմանութիւն՝ Սոֆի Աւագեանի, էջ 7, Երեսն 1989):

Վերնոյի մի նամակի ցանկութեամբ, նրան ուղարկեցի «Մայրիկ» գրքի պարսկերէն թարգմանութիւնից երկու օրինակ եւ այնուհետեւ իրար հետ ունեցանք նամակագր-րութիւններ... Ընդհանուր առմամբ այս գիրքը առաւել իր նկարագրութեան արժէքատր ձեւի, դիւցազներգութիւն է օտարութեան մէջ զուակի արդիւնատրման ճամբին, մի ընտանիքի եւ յատկապէս մօր սխրագործութեան... «Մայրիկ»-ի գիրքն ու Ֆիլմը քաղաքական ասպարէզում պատճառ դարձան, որ դիտաւորեալ մոռացւած մի ցեղասպանութիւն նորից արձարձի եւ Ֆրանսիայի, Ռուսաստանի եւ Յունաստանի նման երկրներ դատա-պարտեն այն, իհարկէ մի քանի երկրներ որոշ քաղաքական ու տնտեսական հաշիւների եւ ըստ Վերնոյի՝ անագ-նութեան ու փոքրոգիութեան հիման վրայ, մոռացութեան մատ-նեցին այն:

Յարգանք քո յիշատակին՝ Աշոտ Մալաքեան:

ՄԻՋԵՊԻՆԻ ԱՆՅՆՆԵՐԻ ԱՆՅՆՆԵՐԻ ԱՆՅՆՆԵՐԻ

Ո՞Վ Է ԼԱՒ ԿԱՅ ԴԱՐՈՂ

Վ. Վաչագան

Վերջերս մի փողոցի մայրից քայլում էի, որ նկատեցի դիմացից ինձ է մօտենում իմ վաղեմի բարեկամներից մէկը: Սկզբում շատ ուրախացայ, քանզի երկու տարի կը լինէր, որ նրան չէի հանդիպում, եւ ենթադրում էի նա էլ ինձ պէս պիտի ուրախանայ: Սակայն պատահեց անսպասելին: Նա կողքիցս անցաւ՝ մոռացութեան տալով ինձ: Նա այնքան մօտ էր, որ նոյնիսկ հպելով ինձ անցաւ: Նախ մի պահ կանգ առայ եւ մտածեցի նրա այդ վերաբերմունքի մասին: Երբ ուշքի եկայ, նա բառականին հեռացել էր: Սկսեցի հակառակ ուղղութեան վրայ նրա հետեւից նախ արագ քայլել եւ ապա վազել՝ նրան շուտ հասնելու համար: Վերջապէս հասայ եւ նրա ձեռքը բռնելով կանգնեցրի: Բարեւեցի: Նա էլ հազիւ լսելի ձայնով պատասխանեց.

- Պարեւ
- Ինչպէ՞ս եւ Առաքել ջան,- հարցնում եմ:
- Ահ, մի կերպ ապրում ենք էլի:
- So տնաշէն այսպէ՞ս են դիմաւորում հին բարեկամներին, ախր մենք մի երկու տարի կը լինի իրար չենք հանդիպել: Եւ երկու տարուց յետոյ դու իմ կողքից անցնում ես առանց բարեւելու: Ի՞նչ վատութիւն ես տեսել ինձանից, որ այսպէս ես վարում:
- Սպասիր, սպասիր, ի՞նչ ես վիլիկուրկուտ 1 անում: Ի՞նչ կապ ունի մեր ընկերութեան հետ:
- Ուրեմն հանդարտիւր եւ ամենայն արինա-պաղութեամբ պատմիր, տեսնենք ի՞նչ է եղել, եւ ի՞նչն է քեզ այդքան վրդովմունք պատճառել: Ամէն մի արարք իր պատճառներն, եւ ամէն մի դժարութիւն իր իւրայատուկ լուծման ճանապարհն ունի:
- Այ մարդ կլիսի Աւետարան մի կարդայ: Ինձ համար ատուակա՞տ ես դարձել: Դու էլնէիր իմ տեղս հի՞նչ կանէիր:
- Բա չես ասի ի՞նչ է եղել եւ ո՞վ է քեզ այսքան անհանգստացրել,- հարցնում եմ:
- Էդ միհանդիս 2 Վալտրին ճանաչո՞ւմ ես քի:
- Նա չէ՞, որի ամբողջ ընտանիքի անդամները յեղափոխութիւնից յետոյ Ամերիկայի Միացեալ Նահանգներ են տեղափոխուել:
- Ողորմի քո անցեալներիդ, հէնց էդ:
- Մի առ ժամանակ լռելուց յետոյ, մի կերպ զսպելով իր զայրոյթն ու յուզմունքը շարունակում է:
- Մի քանի ամիս կար, որ էն առաջայ գործատեղը թափիլին 3 արած: Ես էլ դէ կին, երեխի տեր մարդ եմ, հօ չիմ կարող տունը պարապ նստել: Ծատ մտածելուց յետոյ ասացի զանգեմ էդ ... հային քանի տարի է ադ ու հացի ենք կերած:
- Նորից է լռում: Հարցնում եմ,- յետո՞՞:

- Էլ հի՞նչ յետոյ: Շան տղան վերցրաւ թա՛,- ջանիկս ինչո՞ւ չես վերադառնում քո հօր արհեստին,- ասացի.- «Ախր ես շատ վախտ կը լինի, որ էդ գործից ձեռ եմ քաշել, եւ հինչ հաճախորդ էլ, որ ունիմ ձեռքից տել եմ: Պատասխան տաւ.- Ջանիկս ես մի շէնք եմ սարքում, որ արդէն կառուցելու վրայ է, ել հէնց այնտեղից սկսիր, եւ ես էլ քեզ կը ներկայացնեմ իմ ծանօթներին, եւ մի խօսքով չեմ թողնի, որ պարսպ մնաս:

- Դա հօ շատ լաւ է: Ի՞նչ վատ բան կայ դրա մէջ,- դիմում եմ նրան:

- Այ մարդ սուտ էր ասում անիրար: Ինձ խաբեց, տարաւ շէնքի վրայ, յետոյ էլ մի քանի օր չէր անցած, թա՛ ես քինում եմ Ամերիկայ: Ես էլ ասի պաւ աւ, ես հի՞նչ պիտի անեմ: Պատասխանն էս էլաւ թա.-

- Դու քո գործդ արա, միայն փող պէտք լինելու դէպքում դիմիր աղայէ 4 Նուրիին: Նուրին էլ իր թուրք օգնականն էր:

- Յետո՞յ, յետոյ,- հարցնում եմ հետաքրքրութեամբ:

- Էդքան յետոյ-յետոյ մի ասա: Էդ անիրար թողաւ քինաց: Էն, որ քինաց, էդ անամօթ Նուրին էլ, որ մահանի 5 էր ման կամ չթողեց, որ գործս շարունակեմ: Ես էլ զանգեցի Ամերիկայ եւ ասացի իմ բանս պարզի: Էն էլ թա՛,- Դու քո գործիդ նայիր, նա իզուր է խառնում, նրան կապ չունի: Բայց հինչ օգուտ չթող, որ չթողեց: Մնաց մինչեւ ինքն եկաւ: Ես մտածեցի երեք ամսից յետոյ վերջապէս գործս կը շարունակեմ: Որ եկաւ քինացի մօտը, ասի.

- Պարոն Սիանդիս, իմ գործիս վիճակը պարզի, ես էլ գիդան հինչ եմ անում: Հի՞նչ ասի լաւա: Կարծես հօրը պարտականիմ: Առաջ ծոռ-ծոռ նայեց, յետոյ էլ քի.- Շուտ գնա այդ մարդու սրտիցը հանիր, թող անհանգիստ եւ խռով չմնայ: Տեղումս քարիմ կտրել: Հարիւր հատ ուշուց տայիր աւելի լաւ էր:

Նրա դէմքը մռայլեց, քիչ էր մնում լաց լինէր: Մեր խօսակցութիւնը այդքանով չաւարտեց: Մի առ ժամանակ լռութիւնից յետոյ դիմեց ինձ.

- Հիմա տու ասա, պա էդ մարդու գործ էր: Էդ անիրարը տեսա՞ր հինչ խաղ խաղաց իմ գլխին:

- Նա հօ միշտ հայրենասիրութեան ու հայապահպանութեան մասին էր խօսում:

- Այ մարդ, հի՞նչ հայրենասիրութիւն, հի՞նչ պան: Պա մի մարդ, որ օխտը պորտը ուղարկելա Ամերիկայ, էլ ի՞նչ իրատունք օնի Հայաստանի մասին խօսի: Օգուտ եմ տեսնեմ էդ մարդը մինչեւ հիմա հի՞նչա արել Հայաստանի համար, ո՞ր դպրոցնա սարքած, ո՞ր գործարանն է սարքած: Մի մարդ, որ իր հային, իր քոհնա6 ծանօթին ծախի մի թուրքի, էդ էլ հի՞նչ հայ:

Յաւօք, որեւէ մխիթարանքի խօսք չգտայ իմ բարեկամիս հանգստացնելու համար, եւ ոչ էլ վիճելու որեւէ պատճառ ունէի, քանզի նա լիովին իրաւացի էր: Դժբախտաբար մեր համայնքում քիչ չեն այդ վաղորդների քիւր:

- 1. *Վրայ բերել:*
- 2. *Շարտարապետ:*
- 3. *Յանձնել, արձակել*
- 4. *Պարոն:*
- 5. *Պատրուակ*
- 6. *Վաղեմի*

Ուղղագրական ցաւ

Թեհրանի հայոց «Նոր բուրաստան» գերեզմանոցում ննջեցեալ հարազատների շիրիմների վրայ խունկ ծխելուց յետոյ, մի-մի ծաղկեփունջ թողնելով նրանց տապանաքարերի վրայ մտադրում ենք մեկնել: Չգիտեմ յանկարծ ինչու, սկամայ բաժանում եմ միս հարազատներից, եւ սկսում եմ մի այլ ուղղութեան վրայ քայլել: Ինչ-որ բնագոյից ելնելով կանգ եմ առնում մի շիրմաքարի կողքին: Քիչ անց ինձ միանում է մի հասունացած կին: Նա էլ է կանգնում շիրմաքարի մօտ: Բոլորից առաջ այդ տիկնոջ արտաքինն է ինձ գրաւում: Այնպէս էր շպարել, կարծես թէ ինչ-որ հարսանեկան հանդէսի է մասնակցել: Սկսում է կարդալ տապանաքարի վրայ տողերը,- Այստեղ հանգչել է...

- Թաղեմ գլուխդ, հէնց լաւ է, որ շուտ ես սատկել,- յանկարծ վրայ է բերում շպարած տիկինը:

- Ներեցէք տիկին, ճանաչո՞ւմ էք ննջեցեալին,- հարցնում եմ:

- Չէ,- պատասխանում է շատ չոր ու կոպիտ:

- Այդ դէպքում ինչո՞ւ էք այդպէս խօսում նրա հասցէին:

- Գոռքեգոռ1 էլածը կոնունիստ էր,- բորբոքած պատասխանում է հարցիս:

- Բայց չէ-որ ասացիք չէք ճանաչում: Այդ դէպքում որտեղի՞ց գիտէք, որ նա կոնունիստ է եղել,- զարմացած հարցնում եմ ես:

- Բա չէ՞ք տեսնում քարի վրայ գրած տողերը կոնունիստների սարքած ուղղագրութիւնով է:

Նրա խօսքերից յետոյ ուշադրութեամբ կարդացի շիրմաքարի վրայ գրած տողերը եւ սկսեցի դառը ծիծաղել: Նա նկատելով իմ ծիծաղը, ջղային տոնով ասաց.

- Ի՞նչ ծիծաղելու բան կայ, ասա մենք էլ իմանանք:

- Նախ, տիկին, քարի վրայ գրած տողերը, շատ հին են եւ սխալներով է գրած: Դա ոչ թէ ինչ-որ ուղղագրութիւն կիրառելու նպատակով է եղել, այլ բխում է գրողի անկրթութիւնից, եւ յետոյ ո՞վ է ասել, որ «Նոր» ուղղագրութիւնը պատկանում է ինչ-որ կուսակցութեան: Դա մեր արդի ուղղագրութիւնն է, եւ մենք պէտք է յարգանքով վերաբերենք մեր բոլոր ուղղագրութիւններ նկատմամբ: Եւ այդ ամենից յետոյ ուղղագրութիւնը լեզաբանական բարդ հարց է, որով պէտք է վերջին հաշուով զբաղեն լեզաբանները,- փորձեցի համոզել տիկնոջն, որ ինքը թիրիմացութեան մէջ է, սակայն կտրելով խօսքս, բռռալով ասաց.

Եւ խօսքերն իմ գրովը չեն մտնում: Դրա հնարողներն իսկի հայ չին: Նրանք... նրանք Ալլան2, իմանում ես ինչա՞, կարծես դու էլ ես կոնունիստ,- ասաց եւ քքի տակ ինչ-որ բան մըմըթալով հեռացաւ:

- 1. *Անողորմելի*
- 2. *Հիմնովին, հիմքից*



Գրականութեան էջերից Գրիմ եղբայրներ

Իմաստաբան շրջանապահ

Յակոբ եւ Վիլհամ Գրիմ եղբայրները գերմանացի նշանավոր գրող, գիտնականներ են: Ապերլ են 18-րդ դարավերջին եւ 19-րդ դարի սկզբին: Եղել են Բեռլինի համալսարանի պրոֆեսորներ: Ամբողջ կեանքում ապրել ու ստեղծագործել են միասին, շատ աշխատութիւններ են գրել ու հրատարակել լեզուաբանութեան եւ գերմանական ժողովրդական բանահիւսութեան մասին:

Այստեղ առաջարկում է կարդալ Գրիմ եղբայրների մշակած հեքիաթներից մէկը՝ «Աստղային թալերները»:

Պատգամային թալերներ

Լինում է, չի լինում՝ մի փոքրիկ աղջիկ է լինում: Նրա հայրն ու մայրը մեռնում են: Էնքան աղքատ է լինում էս աղջիկը, որ մի փոքրիկ խրճիթ էլ չի ունենում, մի մահճակալ էլ չի ունենում, որ վրան քնի: Եղած-չեղածը հագի միակ շորն է լինում ու ձեռքին բռնած մի կտոր հացը, որ մի բարի մարդ ողորմութիւն է տւած լինում: Բայց աղջիկը շատ բարի ու համետ է լինում: Էդպէս մենակ ու խեղճ դուրս է գալիս դաշտ ու գնում: Ճամփին մի աղքատ մարդ է հանդիպում նրան ու ասում.

- Ի՞նչ կը լինի մի բան տաս ուտեմ, շատ եմ սոված:

Աղջիկը ձեռքի վերջին կտոր հացը տալիս է նրան ու ասում.

- Անուշ լինի:

Մէկ էլ մի երեխայ է անցնելիս լինում ճամփով, նա դառը-դառը լաց է լինում ու ասում.

- Գլուխս մըսում է, մի բան տուր ծածկւեմ:

Աղջիկը հանում է գլխարկը տալիս նրան: Մի քիչ գնում է, մէկ էլ մի ուրիշ երեխայի է հանդիպում, հագին շոր չի լինում, ցրտից դողում է: Աղջիկն իր հագի վերնաշապիկը հանում է ու տալիս նրան: Մի ուրիշ երեխայ էլ նրա շրջագետսն է ուզում: Վերջապէս հասնում է անտառ, մի երեխայի էլ է հանդիպում, սա էլ նրա շապիկն է ուզում: Բարի աղջիկը մտածում է. «Մոտք գիշեր է, ո՞վ է տեսնելու ինձ, շապիկս էր սրան տամ», հանում է ու տալիս երեխային: Էդպէս տկլոր կանգնում է, մէկ էլ տեսնում է երկնքից աստղեր են թափում, բայց դրանք ոչ թէ աստղեր են, այլ բոլորովին նոր, փայփլուն թալերներ: Ու թէեւ նա իր վերջին շապիկն էլ էր տւել ուրիշին, նոր շապիկ է յայտնում վրան, ամենանորը վուշից, եւ աղջիկը փէշը լցնում է թալերներով, որոնք նրան բաւականացնում են ամբողջ կեանքում:

թալեր- հին գերմանական դրամ

- Ոչ մի մեծ բան միանգամից չի ստեղծել:
- Ամէն ինչ սկսում է սկզբից:
- Լաւ սկիզբը գործի կէսն է:
- Գործի վերջն է գովելի:

Խաչքառ

Ճորճիր գտնել Հայաստանի հին ու նոր քաղաքների ու գիւղերի անունները, ապա գծիր խաչքառում, իսկ մնացած 8 տառերով գրիր մայր աթոռի կենտրոնը:

Չ	Վ	Ս	Պ	Ի	Տ	Ա	Կ	Ա
Ա	Ա	Ս	Ղ	Ա	Փ	Ա	Ն	Ր
Ր	Ն	Ի	Ս	Ի	Ր	Ռ	Գ	Տ
Ե	Կ	Ս	Լ	Ռ	Ռ	Ի	Ն	Ա
Ն	Ա	Ի	Ի	Շ	ՌԻ	Շ	Ա	Շ
Ց	Ր	Ա	Ս	Ր	Ա	Կ	Ե	Ա
Ա	Ա	Ն	Մ	ՌԻ	Շ	Վ	Վ	Տ
Ի	Տ	Գ	Ս	Ե	Ղ	Ե	Ռ	Ի
Ա	Շ	Ն	Մ	Ի	Ա	Գ	Բ	Ն
Ն	Ա	Է	Ջ	Ի	Ծ	Ի	Ա	Ա

ՀԱՆՆՈՒԿՆԵՐ

Աշխարհի հետ ծնւել է,
Աշխարհի հետ՝ մեծացել,
Բայց երեսուն օրից դէմ,
Մինչեւ հիմա չի անցել:

Լուսին

Ամենքի հետ սկսում է,
Ամենքի հետ՝ աւարտում:
Ամենքի հետ աւարտելով՝
Երբեք էլ չի ընդհատում:

ժամանակ

ՀՈՒՄՈՐ

Ուսուցչուհին առաջարկում է տանը շարադր-րութիւն գրել «Ի՞նչ է ծուլութիւնը» թեմայով: Հետեւեալ օրը աշխատանքները ստուգելիս մի աշակերտի տետրի առաջին, երկրորդ, երրորդ էջերը դատարկ է գտնում, իսկ չորրորդ էջին գրած էր՝ «Ահա, թէ ինչ է ծուլութիւնը»:

Էջը պատրաստեց Արմինէ Բարսեղեանը

ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՇԱՔԱՐԱԽՏԸ ԿԱՆԱՆՅ ՄՕՏ

Harvard Women's Health Watch
ամսագիր, 2001թ., 3ուլիս
**Թարգմանեց
Լեւոն Անարոնեանը**

ԿԱՆԱՅՔ, ՇԱՔԱՐԱԽՏԸ ԵՒ ՄՐՏԻ ՀԻՄՆԱԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Շաքարախտաւոր կանայք հակուած են ունենալ սրտանօթային հիւանդութեան վտանգի առաւել շեշտուած ազդակներ: Օրինակ՝ Ամերիկայի կարմրամորթների վերաբերեալ կատարուած մի ուսումնասիրութիւն գտնում է, թէ շաքարախտաւոր կանայք արեան ճնշման առաւել աճ, իրանի չափից աւելի գիրութիւն, բարձր LD եւ ցածր HDL խոլեստերոլի աստիճան ունեն քան նոյն տեղի տղամարդիկ: Մի խումբ հետազոտողների կարծիքով արեան գլուկոզի բարձր աստիճանը միջամտում է էստրոգենի սրտի վրայ ունեցած բարերար ազդեցութեան մէջ: Բայց դեռ պարզուած չէ, թէ ինչպիսի ազդեցութիւն ունի ինսուլինի դիմադրութիւնը այդ խանգարումների վրայ: Համաձայն 2001թ. մայիսին, «ժողեստերոլի մասին Ուսուցման Ծրագիր» Ազգային հիմնարկի հրատարակած տեսլաների, շաքարախտաւոր կանայք ենթակայ են սրտի կաթածի նոյն ռիսկի, ինչին ենթակայ են արդէն իսկ սրտանօթային հիւանդութիւն ունեցող կանայք: Ուստի մասնագէտները այդպիսի կանանց խորհուրդ են տալիս իրենց արեան խոլեստերոլը հիմնովին բուժեն խոլեստերոլ իջեցնող դեղամիջոցներով, ինչպիսիք են Statin-ները:

ՇԱՔԱՐԱԽՏԻ ԲՈՒԺՈՒՄԸ՝ ԱՊՐԵԼԱԿԵՐՊԸ ՓՈՒՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՈՎ

Երկրորդ կարգի շաքարախտը բուժելու համար անհրաժեշտ է իրացնել մարմնի քաշի կորուստ- լինի դա մարմնամարզի, պահքի (diet) կամ էլ այդ երկուսի համատեղութեամբ: Չորս-հինգ կիլոգրամով նիհարելը նշանակում է վերագտնել արեան բնականոն ճնշում, նոյնիսկ այն դէպքում երբ, դեռեւս որոշակիօրէն չափից աւելին է ձեր քաշը: Քաշի կորուստը նպաստում է ինսուլինի դիմադրութեան նւազմանը եւ օգնում որպէսզի առաւել ազդու օգտագործի ինսուլինը:

Գործուն կենցաղ վարելը պակսեցնում է սրտանօթային հիւանդութեան ռիսկը, նպաստում քաշի կրճատմանը եւ օգնում՝ աւելի շատ գլուկոզ վառելուն, որն ինքնին իջեցնում է արեան շաքարի աստիճանը: Աւ, զարկ է տալիս ինսուլինի զգայնականութեանը (insulin sensitivity)՝ ինսուլինի դիմադրութեան ճիշտ հակառակը: Մարմնամարզը, մնանապէս, կարող է լաւագոյն ուղիներից համարել շաքարախտը կանխելու ճամփին: Երկու, իրարից անկախ, ուսումնասիրութիւններ հաստատել են, որ այն կանայք եւ տղամարդիկ, ովքեր շաքարակաւ առնուազն 5 անգամ

մարմնամարզով զբաղուած են 40 առ հարիւր համեմատութեամբ աւելի քիչ են ենթակայ շաքարախտի քան նրանք ովքեր մարզանք չեն անում:

Պահքի (diet) միջոցով շաքարախտի վրեժխնայումը կայանում է առաջատար ուտեստների եւ խորտիկների, ըստ մի կանոնաւոր ժամանակացոյցի, սպառման մէջ: Ինչպէս նաեւ մի կողմ դնելով չափից շատ կալորիաները: Նրբաթելերի (fibers) բարերար ազդեցութեան մասին են յուշում մի քանի ուսումնասիրութիւններ: Անցեալ տարի New England Journal of Medicine պարբերաթերթում հրատարակուած մի ուսումնասիրութիւն գտնում է, որ նրբաթելերով հարուստ սննդակարգը (օրական 50 գրամի չափ) 10%-ով իջեցնում է արեան գլուկոզի աստիճանը եւ դա դրական է համեմատում ներկայում շուկայ հասնուած մի շարք տեղումիջոցների ունեցած ազդեցութեան հետ:

Մինչ պահքը եւ մարմնամարզը կարելի է երկրորդ կարգի շաքարախտի կանխման եւ բուժման անկիւնաքարեր համարել, տառապողները երբեմն կարիք ունեն նաեւ դեղերով բուժել:

ՇԱՔԱՐԱԽՏԻ ԲՈՒԺՈՒՄԸ՝ ԴԵՂԱՄԻՋՈՑՆԵՐՈՎ

Մինչեւ համեմատաբար վերջերս, բերնով ընդունող շաքարախտի միակ դեղատեսակն ԱՄՆ-ում սուլֆոնիլիւրաներն (sulphonylurea) էին, դեղամիջոց որը արեան գլուկոզի աստիճանը իջեցնում եւ խթանում է ինսուլինի արտադրութեանը: Երբ ձախողում էին այդ կարգի դեղերը հարկ էր լինում դիմել ինսուլինի սրսկումներին: Վերջին հինգ տարիներում ակամատես ենք եղել մի ակներեւ շրջադարձի: Շաքարախտի դէմ դեղամիջոցների թիւն աւելի քան եռապատկուեց. շուկայ հասնեցին միանգամայն նոր տեսակի բաղադրութիւններ: Նոր դեղերը միտում են յաղթահարել ինսուլինի դիմադրութիւնը, սատարել դրա արտադրման եւ պայքարել արեան գեր-ճնշման դէմ:

Բժիշկները ոչ միայն տրամադրութեան տակ ունեն դեղերի առաւել լայն ընտրանի, այլ նաեւ բուռն կերպով օգտուում են դրանցից:

Այն դէպքերում, երբ դեղամիջոցներն բւարար չեն լինում բուժման համար, ինսուլինի սրսկումը դեռեւս համարում է ամենից ազդու բուժման եղանակը: Դեղարտադրական մի քանի ընկերութիւններ փորձում են մշակել ինսուլինի մի տարբերակ, որը հնարաւոր լինի ներընդունել շնչառութեան միջոցով (փոխարէն սրսկման):

Ճար. 2

Ցաւակցական
Ցաւօք տեղեկացանք, որ թերթիս լաւ բարեկամներ պրն. Նորայր Շահբազեանը եւ տիկ. Գիաննա Միմասեանը մեծ կորուստներ են կրել:
Թերթիս խմբագրական կազմն իր խոր ցաւակցութիւնն է յայտնում առաջինի օրը եւ երկրորդի սիրասուն զաւակի մահուան առթիւ:
Խմբ.